


# ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՂՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԿՈՊՊԵՐԱՑԻԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ



ԵՐԵՎԱՆ 2016

<b>ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ</b> .....	2
<b>Քանակական հարցում</b> .....	6
<b>Ֆոկուս խմբեր</b> .....	7
<b>Դեպքի ուսումնասիրություն</b> .....	8
<b>Գրականության ցանկ</b> .....	9
<b>ԲԱԺԻՆ 1. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ</b> .....	11
<b>Ընդհանուր նկարագիր</b> .....	11
<b>Մակրոտնտեսություն</b> .....	11
<b>Հողօգտագործում</b> .....	14
<b>Բուսաբուծություն և անասնաբուծություն</b> .....	16
<b>Առկա խնդիրները. գյուղտեխնիկա, որակավորված մասնագետներ</b> .....	18
<b>Պետական քաղաքականություն և համագործակցություն</b> .....	20
<b>Գյուղատնտեսության վարկավորում ֆինանսական կազմակերպությունների կողմից</b> .....	24
<b>Կոոպերատիվներ և առևտրային կազմակերպություններ</b> .....	26
<b>Կոոպերատիվների գործունեությունը կարգավորող օրենքներ և իրավական ակտեր</b> .....	30
<b>ԲԱԺԻՆ 2. ՔԱՆԱԿԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ</b> .....	36
<b>Հարցվողների սոցիալ-տնտեսական բնութագիրը</b> .....	36
<b>Հիմնական բուսաբուծական արտադրանքը</b> .....	40
<b>Հողատարածքի բնութագիրը և այլ առանձնահատկություններ</b> .....	41
<b>Հիմնական սպառման շուկա և գնորդների հետ հարաբերություններ</b> .....	47
<b>Եկամտի և գյուղատնտեսական գործունեության կայուն զարգացման վրա ազդող գործոնները</b> .....	53
<b>Կոոպերացիա</b> .....	54
<b>ԲԱԺԻՆ 3. ՖՈԿՈՒՍ ԽՄԲԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ</b> .....	63
<b>Գյուղատնտեսական կոոպերատիվների և կոոպերացիայի մասին ընկալումները</b> .	63
<b>Համագործակցության պրակտիկաները և դրանց մասին պատկերացումները</b> .....	68
<b>Կոոպերատիվների խնդիրները և հնարավորությունները</b> .....	72
<b>ԲԱԺԻՆ 4. «ԲԵՐԴԱՎԱՆ» ՊՏՂԱԲՈՒԾԱԿԱՆ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎ. ԴԵՊՔԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ</b> .....	77

<b>Գործունեության նկարագրություն</b> .....	77
<b>Ֆինանսական տվյալներ</b> .....	80
<b>Հիմնական ձեռքբերումներ</b> .....	81
<b>Հիմնական խոչընդոտներ</b> .....	82
<b>Կառավարում</b> .....	84
<b>Ջարգացման հեռանկարներ</b> .....	85
<b>ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b> .....	86



## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն հետազոտության նպատակն է տրամադրել բուսաբուծության ոլորտում Հայաստանում գործող գյուղատնտեսական արտադրողների միջև ֆորմալ, ինչպես նաև ոչ ֆորմալ կոոպերացիաների մասին տեղեկատվություն, որը հետագայում կօժանդակի գյուղատնտեսական ռազմավարական ծրագրերի մշակմանը:

Հետազոտության շրջանակում բացահայտվել են միջազգային, տեղական և պետական կառույցների կողմից խթանված կոոպերատիվների գործունեության թերացումներն ու կայուն աշխատանքի և զարգացման համար հնարավոր խոչընդոտները, ինչպես նաև գնահատվել ներկայիս ձեռքբերումներն ու հաջողությունները՝ հետագայում կոոպերատիվների գործունեությունն առավել արդյունավետ կազմակերպելու ուղիներ գտնելու համար:

Հետազոտությունը նպատակ ունի նաև գնահատելու Հայաստանում կոոպերատիվների նկատմամբ մարդկանց տրամադրվածությունը, գիտելիքները մակարդակը, ինչպես նաև կոոպերատիվների աշխատանքներում ընդգրկվելու ցանկությունը: Սա հասկանալու համար հետազոտությանը ներգրավվել են նաև ներկայումս կոոպերատիվ չունեցող համայնքներ, ինչպես նաև ընդգրկվել են գյուղացիներ, ովքեր չեն անդամակցում որևէ կոոպերատիվ՝ չնայած դրա հասանելիությանը համայնքում:

Բացի այդ, որպեսզի հնարավոր լինի ճիշտ գնահատել կոոպերատիվների առավելություններն ու կայուն զարգացման հնարավոր խոչընդոտները, հետազոտությունը պարունակում է նաև Հայաստանի գյուղատնտեսության ոլորտի, ինչպես նաև կոոպերատիվների իրավական կարգավորման մասին նկարագրեր:

Հետազոտության նպատակներին հասնելու համար «Մոզաիք Էյ-Էմ» հետազոտական կազմակերպությունը ուղորդվել է «Շեն» ԲՀԿ հետ համատեղ մշակված և նախապես համաձայնեցված հետազոտական ծրագրով: Սույն հետազոտության մեջ կիրառվել են առաջնային տվյալների հավաքագրման քանակական և որակական մեթոդներ, ինչպես նաև փաստաթղթերի ուսումնասիրություն և մեկ կոոպերատիվի մանրամասն դեպքի ուսումնասիրություն:

Զեկույցը ներառում է հինգ բաժին: Առաջին բաժնում ներկայացված են երկրորդային աղբյուրներից ստացված տվյալները՝ Հայաստանի գյուղատնտեսության ոլորտի ընդհանուր նկարագիրը, կոոպերատիվների դերը գյուղատնտեսության զարգացման մեջ, դոնորների կողմից խթանված կոոպերատիվների գործունեությունը, պետական ռազմավարություններն ու կոոպերատիվների գործունեությունը կարգավորող իրավական դաշտի նկարագիրը: Երկրորդ, երրորդ և չորրորդ բաժինները ներառում են, համապատասխանաբար, քանակական, որակական և դեպքի ուսումնասիրության վերլուծությունները, որոնց հետազոտական մեթոդաբանությունը ներկայացված է ստորև: Վերջին բաժինը նվիրված է եզրակացություններին և առաջարկություններին:

## **Քանակական հարցում**

Հարցումը իրականացվել է ՀՀ ութ մարզերի քսան գյուղերում: Գյուղական համայնքների ընտրությունը կատարվել է հաշվի առնելով տարածարջանում բուսաբուծական գործունեության տարածված լինելը, ինչպես նաև գործող կոոպերատիվի հասանելիությունը: Ընդհանուր առմամբ հարցմանը մասնակցել է 300 հոգի, որից 100-ը ներկայումս անդամակցում են որևէ կոոպերատիվի, իսկ 200-ը կոոպերատիվի անդամներ չեն: Համապատասխանաբար մշակվել է երկու տարբեր հարցաթերթ՝ ուղված կոոպերատիվի անդամներին և ոչ անդամների (հարցաթերթերը ներկայացված են հավելվածում): Կոոպերատիվի անդամների հետ հարցման միջին տևողությունը եղել է 25 րոպե, ոչ անդամներինը՝ 20 րոպե: Հարցումները անց են կացվել անհատական և եղել են անանոն:

Գյուղում կոոպերատիվի անդամներին գտնելու հարցում աջակցեցին «Շեն» ԲՀԿ մարզային ներկայացուցիչները, ինչպես նաև կոոպերատիվի նախագահները: Քանակական հարցման մյուս մասնակիցների ընտրությունը կատարվել է ընտրանքի պատահական սկզբունքով. ընտրության միակ չափանիշը բուսաբուծության ոլորտում պատասխանողի ներգրավվածությունն էր:

Հարցումը իրականացվել է տասը համայնքային այցերի միջոցով, որից յուրաքանչյուրի ընթացքում հարցազրուցավարները այցելել են տարածաշրջանում բնութագրով իրար հնարավորինս մոտ երկու գյուղ: Ընտրանքի պայմանն այն էր, որ նշված գյուղերից մեկում պետք է լինի կոոպերատիվ, իսկ մյուսում՝ ոչ:

Ըստ այդմ՝ ընտրվել են տասը կոոպերատիվ ունեցող գյուղեր և դրանց հարևանությամբ գյուղեր, որտեղ առկա չէ կոոպերատիվ: Այն գյուղերում, որտեղ գործում է կոոպերատիվ արվել է քսան հարցում՝ տասը կոոպերատիվի անդամների հետ, տասը՝ ոչ անդամների: Կոոպերատիվ չունեցող գյուղերից յուրաքանչյուրում արվել է տասը հարցում:

Ընտրանքի այս տրամաբանությունը թույլ է տալիս հասկանալ և համեմատել կոոպերատիվի առավելություններն ու ռիսկերը ինչպես անդամների, այնպես էլ համայնքի համար:

Քանակական հարցման ընտրանքը

Մարզ	Գյուղ	Հարցումների քանակ	Կոոպերատիվ
Արմավիր	Լուկաշին	20	«Լուկաշին» ՍԿ
	Խանջյան	10	Գյուղում չկա կոոպերատիվ
	Արևիկ	20	«Արևիկ» ՍԿ
	Մրգաշատ	10	Գյուղում չկա կոոպերատիվ
Տավուշ	Բերդավան	20	«Բերդավան» պտղաբուծական ՍԿ
	Կոթի	10	Գյուղում չկա կոոպերատիվ
	Պտղավան	20	«Պտղավան» գյուղատնտեսական ՍԿ
	Զորական	10	Գյուղում չկա կոոպերատիվ
Շիրակ	Բասեն	20	«Բասեն համայնքի արտոգտագործողների միավորում» ՍԿ
	Կառնուտ	10	Գյուղում չկա կոոպերատիվ
Արագածոտն	Թաթուլ	20	«Թաթուլ համայնքի արտոգտագործողների միավորում» ՍԿ
	Աշնակ	10	Գյուղում չկա կոոպերատիվ
Արարատ	Փոքր Վեդի	20	«Խոր Վիրապ» գյուղատնտեսական ՍԿ
	Վանաշեն	10	Գյուղում չկա կոոպերատիվ
Վայոց Ձոր	Գոմք	20	«Վանքաձոր գյուղատնտեսական սանցիազիա» ՍԿ
	Խնձորուտ	10	Գյուղում չկա կոոպերատիվ
Սյունիք	Անգեղակոթ	20	«Անգեղակոթ համայնքի արտոգտագործողների միավորում» ՍԿ
	Աշոտավան	10	Գյուղում չկա կոոպերատիվ
Գեղարքունիք	Մարտունի	20	«Մարտունի համայնքի արտոգտագործողների միավորում» ՍԿ
	Դպրաբակ	10	Գյուղում չկա կոոպերատիվ
<b>Ընդհանուր</b>		<b>300</b>	

**Ֆոկուս խմբեր**

Հետազոտության ընթացքում իրականացվել է տասը ֆոկուս խմբային քննարկում: Քննարկումները անց են կացվել վեց մարզերի տասը տարբեր գյուղերում: Ֆոկուս խմբերի մասնակիցները ընտրվել են քանակական հարցման ընտրանքի տրամաբանությամբ՝ կոոպերատիվի անդամներ (5 ֆոկուս խումբ), անդամակցության փորձ չունեցողներ (1 ֆոկուս խումբ), ինչպես նաև գյուղացիներ, ում համայնքում գործող կոոպերատիվ չկա (2

Ֆոկուս խումբ), բացի այդ մեկ քննարկում արվել է գյուղացիների ոչ ֆորմալ խմբի անդամների և մեկ քննարկում կոոպերատիվի նախկին անդամների հետ:

Ընտրվել են այնպիսի համայքներ, որոնք հնարավորինս ապահովել են տարաբնույթ փորձառություններ՝ սկզբունքը եղել է բազմազանությունը: Տասը Ֆոկուս խմբերից երկուսը եղել են կանանց կոոպերացիաներ: Միջինում յուրաքանչյուր ֆոկուս խմբային քննարկմանը մասնակցել է 9-10 մարդ, իսկ մեկ քննարկման տևողությունը եղել է 90-120 րոպե: Բոլոր ֆոկուս խմբային քննարկումները ձայնագրվել և սղագրվել են:

Ֆոկուս խմբերի ընտրանքը

Մարզ	Գյուղ	Ֆոկուս խմբերի քանակ	Կարգավիճակ
Տավուշ	Բերդավան	1	Կոոպերատիվի նախկին անդամներ
Տավուշ	Պտղավան	1	Կոոպերատիվին չանդամակցողներ
Գեղարքունիք	Գեղամասար	1	Գյուղում չկա կոոպերատիվ
Վայոց Ձոր	Խնձորուտ	1	Գյուղում չկա կոոպերատիվ
Սյունիք	Աշոտավան	1	Ոչ ֆորմալ կոոպերացիա
Վայոց Ձոր	Գոմք	1	Կոոպերատիվի անդամներ
Սյունիք	Շաքի	1	Կոոպերատիվի անդամներ
Արարատ	Նոր Կյանք	1	Կոոպերատիվի անդամներ
Գեղարքունիք	Թթուջուր	1	Կոոպերատիվի անդամներ
Շիրակ	Հացիկ	1	Կոոպերատիվի անդամներ
<b>Ընդհանուր</b>		<b>10</b>	

### Դեպքի ուսումնասիրություն

Հետազոտության շրջանակում նախատեսված դեպքի ուսումնասիրության համար ընտրվել է Տավուշի մարզի Բերդավան գյուղում գտնվող սպառողական կոոպերատիվը: Կոոպերատիվի գործունեության համապարփակ և բազմակողմանի պատկերը ստանալու համար ուսումնասիրության ընթացքում օգտագործվել են տվյալների հավաքագրման մի շարք հետազոտական մեթոդներ, ինչպես նաև ընդգրկվել են կոոպերատիվի գործունեությանն ուղակի և անուղակի առնչվող խմբեր այդ թվում՝ կոոպերատիվի անդամների հետ հարցազրույցներ, կոոպերատիվի նախկին անդամների հետ ֆոկուս խումբ, «Շեն» ԲՀԿ մարզային ներկայացուցչի հետ անհատական խորացված հարցազրույց, ուսումնասիրվել են նաև սույն հետազոտության շրջանակում իրականացված Բերդավանի գյուղացիների հետ



քանակական հարցման տվյալները, ինչպես նաև ուսումնասիրվել են կոոպերատիվի հիմնադիր փաստաթղթերը:

Կոոպերատիվի առօրյա գործունեությանը ծանոթանալու համար նախատեսված ընդգրկված դիտարկման մեթոդը այս պարագայում կիրառելի չէր, քանի որ կոոպերատիվը ամենօրյա գործունեություն չի ծավալում և կոոպերատիվի աշխատանքը կրում է սեզոնային բնույթ: Այս երևույթը բնորոշ է ոչ միայն «Բերդավան» սպառողական կոոպերատիվին, այլև Հայաստանում առկա մնացած կոոպերատիվներին: Տվյալ դեպքում կոոպերատիվն արդեն ավարտել է այգիների բուժման, մշակության աշխատանքները և իր գործունեությունը վերսկսելու է դեղձի և խաղողի բերքահավաքին զուգընթաց՝ օգոստոս-հոկտեմբեր ամիսներին, ինչը չհամընկավ իրականացվող հետազոտության ժամանակացույցին:

## Գրականության ցանկ

ՀՀ ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական կայքէջ՝ <https://www.armstat.am>

ՀՀ գյուղատնտեսության նախարարության պաշտոնական կայքէջ՝  
[http://minagro.am/public/uploads/2015/02/CARMAC\\_II.pdf](http://minagro.am/public/uploads/2015/02/CARMAC_II.pdf)

ՀՀ ֆինանսների նախարարության պաշտոնական կայքէջ՝  
<http://www.mfe.am/index.php?hdr=264&lang=1>

ՀՀ կենտրոնական բանկի պաշտոնական կայքէջ՝  
<https://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx>

«Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն» (ICARE) հիմնադրամ՝  
Country report: Armenia, March 2015՝ [http://www.agricistrade.eu/wp-content/uploads/2015/05/Agricistrade\\_Armenia.pdf](http://www.agricistrade.eu/wp-content/uploads/2015/05/Agricistrade_Armenia.pdf)

«Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն» (ICARE) հիմնադրամի կոոպերատիվների մասին ուղեցույց՝ [http://icare.am/uploaded\\_files/11111%20\(1\).pdf](http://icare.am/uploaded_files/11111%20(1).pdf)

Գյուղատնտեսության և գյուղական շրջանների զարգացման ոլորտների գնահատումն Արևելյան գործընկերության երկրներում՝ <http://www.fao.org/docrep/field/009/aq670hy/aq670hy.pdf>

World Development Report 2008, Agriculture for Development, The World Bank՝  
<http://documents.worldbank.org/curated/en/587251468175472382/pdf/41455optmzdOPA18082136807701PUBLIC1.pdf>

Հայաստանի ազգային ագրարային համալսարանի պաշտոնական կայքէջ՝ <http://anau.am/>

ՀՀ գյուղատնտեսության նախարարության «գյուղատնտեսական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ պաշտոնական կայքէջ՝ <http://www.arspiu.com/4.0.html>

«Գյուղատնտեսության Ջարգացման Միջազգային հիմնադրամի» պաշտոնական կայքէջ՝  
<http://www.raed.am/home.html>

ՀՀ Էկոնոմիկայի նախարարության պաշտոնական կայքէջ՝ <http://www.mineconomy.am/>

Agriculture in Armenia snapshot – Avenue consulting՝  
<http://www.avenueconsulting.am/resources/avenue/uploads/pdf/aafab24852e8b106fd66818c0349bf8e.pdf>

ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության գրանցված  
Կազմակերպությունների վիճակագրություն՝  
[http://www.justice.am/storage/files/legal\\_acts/legal\\_acts\\_2106531375521\\_stat2014.pdf](http://www.justice.am/storage/files/legal_acts/legal_acts_2106531375521_stat2014.pdf)

Կոոպերատիվների գործունեությունը կարգավորող ՀՀ գործող իրավական դաշտի  
ուսումնասիրություն, Երևան 2014՝  
[http://www.arspiu.com/fileadmin/user\\_upload/photogalleries/Coop\\_Study/Report\\_arm.pdf](http://www.arspiu.com/fileadmin/user_upload/photogalleries/Coop_Study/Report_arm.pdf)

Բաց Հասարակության Հիմնադրամ – Հայաստան, Սուբսիդավորման և ֆինանսավորման  
սխեմաները գյուղատնտեսությունում, գյուղատնտեսական ապրանքների արտահանման խթանում  
ուսումնասիրություն, 2014

<http://www.cooperative.am/>

World Vision Armenia պաշտոնական կայքէջ՝ <http://www.wvarmenia.am/am/adp>

UMCOR Armenia պաշտոնական կայքէջ՝ <http://www.umcorarmenia.am/node/150>

Positive Planet պաշտոնական կայքէջ՝ <http://www.positiveplanet.ngo/en/project/farming-cooperatives-2/>

Շեն ԲՀԿ պաշտոնական կայքէջ՝ [http://www.shen.am/index\\_am.php](http://www.shen.am/index_am.php)

ԵՄ պատվիրակության պաշտոնական կայքէջ՝  
[http://eeas.europa.eu/delegations/armenia/press\\_corner/all\\_news/news/2015/20150709\\_hy.htm](http://eeas.europa.eu/delegations/armenia/press_corner/all_news/news/2015/20150709_hy.htm)

## **ԲԱԺԻՆ 1. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ**

### **Ընդհանուր նկարագիր**

Հայաստանը լեռնային երկիր է, որը տեղակայված է Հարավային Կովկասում: Այն զբաղեցնում է 29,743 կմ<sup>2</sup> տարածք, որը հիմնականում գտնվում է մերձարևադարձային գոտում: Օդի ջերմաստիճանը տարվա ընթացքում տատանվում է +40-ից մինչև -12 աստիճան:

Հայաստանի ավելի քան  $\frac{3}{4}$  մասը գտնվում է ծովի մակերևույթից 1000մ բարձրության վրա: Հիմնական մշակովի տարածքները գտնվում են Արարատյան դաշտավայրում՝ երկրի հարավարևմտյան մասում: Ըստ Ազգային վիճակագրական ծառայության (ԱՎԾ) տվյալների 2014 թվականին ընդհանուր գյուղատնտեսական հողերը կազմել են 20,494 կմ<sup>2</sup>:

Գյուղատնտեսությունը հանդիսանում է յուրաքանչյուր երկրի տնտեսության առանցքային ոլորտներից մեկը: Ոլորտը կարևոր է ինչպես երկրի պարենային անվտանգության ապահովման համատեքստում, այնպես էլ՝ Համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) ձևավորման մեջ մասնակցության, գյուղատնտեսության մեջ ընդգրկված բնակչության զբաղվածության ապահովման և նրանց համար պատշաճ եկամտի ապահովման տեսանկյունից: Գյուղատնտեսության արտադրողականությունը և ստեղծված արդյունքը մեծապես պայմանավորում է սննդամթերքի գները և դրանով իսկ ազդում բնակչության կենսամակարդակի վրա: Հայաստանի համար գյուղատնտեսության կարևորությունը պայմանավորված է վերոնշյալ բոլոր հատկանիշներով:

Խորհրդային Միության փլուզումը կտրուկ կերպով անդրադարձավ Հայաստանի տնտեսության վրա: Հայաստանն իրականացրեց հողային բարեփոխման ծրագրեր, որոնք սկսվեցին 1991թ., իսկ արդեն 1994թ. կեսին գյուղատնտեսական նշանակության հողերի մեծ մասը սեփականաշնորհված էր: Արդյունքում ստեղծվեցին մասնավոր գյուղացիական տնտեսություններ, սակայն առանց օժանդակ ենթակառուցվածքների՝ համապատասխան գյուղատնտեսական տեխնիկայի և մեքենաների, ոռոգման ջրի ու գյուղատնտեսական առաջավոր պրակտիկայի:


### **Մակրոտնտեսություն**

Գյուղատնտեսությունը զգալի մասնաբաժին ունի Հայաստանի ՀՆԱ-ի մեջ և, ըստ այդմ, կարող է էապես նպաստել տնտեսական հետագա աճին: Այն Հայաստանում

երկրորդ խոշոր տնտեսական ոլորտն է արդյունաբերությունից հետո: 2015 թվականի նախնական հրապարակված տվյալներով գյուղատնտեսությունը կազմել է ՀՆԱ-ի 17.3%-ը, իսկ 2014 թվականին այն կազմում էր ՀՆԱ-ի 18.5%: Նշենք, որ 2015 թվականին Հայաստանի ՀՆԱ կազմել է 5032.1 մլրդ դրամ, աճը 2014թ.-ի նկատմամբ՝ 3.0%: ՀՆԱ-ի աճին ամենամեծ դրական նպաստումն ունեցել են գյուղատնտեսությունը և արդյունաբերությունը:


Գյուղատնտեսության աճը տնտեսության աճի հետ մեկտեղ նպաստում է գյուղական բնակչության եկամուտների աճին և աղքատության մակարդակի նվազմանը:

**Պատկեր 1. ՀՆԱ-ում գյուղատնտեսության մասնաբաժնի դինամիկայի համեմատությունը ՀՆԱ-ի ցուցանիշի հետ**




Ինչ վերաբերում է գյուղատնտեսությունում զբաղվածների թվաքանակին, 2014 թվականի դրությամբ Հայաստանի ընդհանուր բնակչության շրջանում զբաղվածությունը կազմում էր 52%, որից 34.8% զբաղվում էր գյուղատնտեսությամբ: Գյուղատնտեսության ոլորտի զարգացման տեմպերից ուղղակիորեն կախված է նաև այս ոլորտում ընդգրկված անձանց կենսամակարդակի աճը:

**Պատկեր 2. Գյուղատնտեսության ոլորտում զբաղվածների տոկոսը 2005-2014թթ.**



Հայաստանում գյուղատնտեսության ոլորտում 2014 և 2015 թվականներին ամենակատիվն են եղել Գեղարքունիքի, Արմավիրի և Արարատի մարզերը, որոնց գյուղատնտեսության համախառն արտադրանքը միասին կազմել է 415,5 մլրդ դրամ 2014 թվականին, իսկ 2015 թվականին՝ 413,8 մլրդ դրամ, որը կազմում է ՀՀ-ի գյուղատնտեսության համախառն արտադրանքի 41.5% և 41.6% համապատասխանաբար 2014 և 2015 թվականների համար:


**Պատկեր 3. Գյուղատնտեսության համախառն արտադրանքի մասնաբաժինն ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի, 2014-2015թթ.**



Հսկայական են Հայաստանի մարզերի միջև աղքատության ցուցանիշի տարբերությունները: Հայաստանի լեռնային համայնքներում գյուղական աղքատության մակարդակը աճում է համայնքի՝ ծովի մակերևույթից ունեցած

բարձրությանը համապատասխան: Այս ցուցանիշը 34.7% է 1,700 մ և ավելի բարձրությամբ բնակավայրերում և 27.1% 1,300 մ և ցածր բարձրությամբ բնակավայրերում (Արարատյան դաշտի մարզեր): 1,300 – 1,700 մ բարձրության վրա տեղակայված համայնքներում աղքատության ցուցանիշը 29.5% է: Այս իրողությունը լիովին բացատրվում է, երբ ուսումնասիրում ենք միավոր մակերեսից ստացվող գյուղ. մթերքի դրամական արժեքը ըստ մարզերի:

**Մշակվող ցանքատարածությունների միավոր մակերեսից (հա) ստացվող եկամուտը ըստ մարզերի (միլիոն դրամ, 2014թ.)**



« Արարատի և Արմավիրի մարզերը ամենացածրադիրն են, գտնվում են Արարատյան դաշտավայրի սահմաններում, ամենաապահովվածն են ոռոգման ջրով, մոտ են գյուղմթերքի տեղական ամենալայն սպառողական շուկային՝ Երևան քաղաքին: Այս մարզերում գյուղատնտեսությունն ամենաեկամտաբերն է « տարածքում, ինչն արտացոլվում է գյուղական բնակչության բարեկեցության համեմատաբար բարձր ցուցանիշով:

**Հողօգտագործում**

2015 թվականի դրությամբ գյուղատնտեսության նշանակությամբ հողերի 51.4% արոտավայր են: Վարելահողերը կազմում են գյուղատնտեսական նշանակության հողերի 22%-ը, որից վիճակագրական տվյալների համաձայն 1/3 չի օգտագործվում հետևյալ պատճառներով՝ դրանք մոտ են գտնվում Հայաստան-Ադրբեջան սահմանի վտանգավոր կամ ականապատված գոտիներին, որոշ վարելահողեր հեռու են բնակավայրերից կամ գյուղատնտեսությամբ զբաղվելու համար անարդյունավետ,

քանի որ ունեն ոռոգման կամ բերքատվության խնդիրներ: Հողերը չմշակելու պատճառներից է նաև գյուղտեխնիկայի սակավությունը: Գյուղատնտեսական նշանակության հողերի (հատկապես արոտավայրերի) օգտագործման կտրուկ աճը գրանցվել է 2005 թվականից, երբ Կառավարության 2004թ-ի դեկտեմբերի 30 որոշմամբ համայնքային ղեկավարին հողերը թույլատրվեց վաճառել շուկայական արժեքից ցածր գնով: Դրա արդյունքում գյուղատնտեսական նշանակության հողերի մակերեսը աճեց 52%-ով:

**Աղյուսակ 1. Ընդհանուր հողային մակերեսը և գյուղատնտեսական հողատեսքերի բաշխումն ըստ տեսակների**

	1995	1997	2008	2009	2010	2011	2012	2013	2014
<b>Ընդհանուր հողային մակերեսը, 1000 հա</b>	<b>2974.3</b>	<b>2974.3</b>	<b>2974.3</b>	<b>2974.3</b>	<b>2974.3</b>	<b>2974.3</b>	<b>2974.3</b>	<b>2974.3</b>	<b>2974.3</b>
<b>գյուղատնտեսական նշանակության հողեր</b>	1391.4	1391.4	2121.2	2120.3	2100.9	2077	2052.4	2051	2049.4
Վարելահող	483.5	494.3	450.4	449.4	448.5	449.2	448.4	448.2	447.5
բազմամյա տնկարկ	74.7	63.8	31.6	32.6	32.9	33	33.4	33.3	33.7
բազմամյա մշակաբույսեր, որից՝	832.4	832.9	1244.4	1243.9	1231.4	1195.5	1177.9	1177.1	1175.9
Խոտհարք	138.9	138.9	127.3	127.3	127.1	128.3	121.6	121.8	121.7
Արոտ	693.5	694	1117.1	1116.6	1104.3	1067.2	1056.3	1055.3	1054.2
այլ հողեր	n/a	n/a	394.8	394.4	388.1	399.3	392.7	392.4	392.3

Գյուղատնտեսական նշանակության հողերի մեծ մասի սեփականաշնորհման արդյունքում 1990-ականների սկզբին ստեղծվեցին մոտ 340,000 մասնավոր գյուղացիական տնտեսություններ: Հողերը բաժանված են ավելի քան 1.2 մլն կտորների. յուրաքանչյուր գյուղացիական տնտեսությանը բաժին է հասնում միջինը երեք առանձին հողակտոր: Ըստ Համաշխարհային բանկի 2007 թվականի հետազոտության՝ յուրաքանչյուր մասնավոր տնտեսություն միջինում ունի 1.4 հա հող, այդ թվում՝ 1.06 հա վարելահող: Հատկապես գյուղական համայնքներում արտագաղթի բարձր ցուցանիշի պատճառով, գնահատվում է, որ գյուղացիական տնտեսությունների թիվը նվազել է մինչև 200,000: Այս տնտեսությունների մեծ մասը հողը օգտագործում է ապրուստի ապահովման համար:

2015թ.-ի հուլիսի 1-ի դրությամբ ՀՀ ոռոգվող հողերի ընդհանուր տարածքը կազմում է 154,700 հա՝ գյուղ. նշանակության հողերի 7.5%-ը, որը 1990-ականների հետ

համեմատած կտրուկ անկում է, երբ ոռոգվող հողերի ընդհանուր տարածքը կազմում էր 275,000 հա: Այդ անկման պատճառները ոռոգման ենթակառուցվածքների վատ պահպանումն ու խարխլումն են, պոմպակայանների չշահագործումը էլեկտրաէներգիայի բարձր գների պատճառով, գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվելու համար շրջանառու միջոցների բացակայությունը և այլն:

Գյուղատնտեսական հողերի մեծ մասը մշակվում է գյուղացիական տնտեսությունների կողմից, և ընդամենը 1%-ը՝ առևտրային կազմակերպությունների կողմից: Գրեթե նույն իրավիճակը անասնաբուծության ոլորտում է, միակ տարբերությամբ, որ թռչնաբուծությամբ և ձվի արտադրությամբ զբաղվում են հիմնականում առևտրային կազմակերպությունները:

### **Բուսաբուծություն և անասնաբուծություն**

Գյուղատնտեսության համախառն արտադրանքը բաժանվում է երկու տնտեսության՝ բուսաբուծություն և անասնաբուծություն: Աղյուսակ 2-ում երևում է, որ Հայաստանը հիմնականում կենտրոնացած է բուսաբուծության ոլորտի վրա:

**Աղյուսակ 2. Գյուղատնտեսության համախառն արտադրանքը ըստ տնտեսությունների**

Տարի	2010	2011	2012	2013	2014	2015
<b>Գյուղատնտեսություն, մլրդ. դրամ</b>	<b>636.7</b>	<b>795</b>	<b>841.5</b>	<b>919.1</b>	<b>993.5</b>	<b>1002.2</b>
Բուսաբուծություն	392.7	465.1	516	572.8	605.7	606.3
Բուսաբուծության մասնաբաժինը, %	61.7%	58.5%	61.3%	62.3%	61.0%	60.5%
Անասնաբուծություն	244	329.9	325.5	346.3	387.8	395.9
Անասնաբուծության մասնաբաժինը, %	38.3%	41.5%	38.7%	37.7%	39.0%	39.5%

Հայաստանում հիմնականում զբաղվում են կարտոֆիլի, բանջարեղենի, հացահատիկի ու հատիկաընդեղենի մշակմամբ: Հատիկաընդեղենի և կարտոֆիլի մշակմամբ հիմնականում զբաղվում են Գեղարքունիքի և Շիրակի մարզերում, իսկ Արարատի և Արմավիրի մարզերը մրգերի և բանջարեղենի հիմնական արտադրողներն են, քանի որ գտնվում են Արարատյան դաշտավայրում և ունեն բարենպաստ կլիմայական պայմաններ և պարարտ հող:

Հացահատիկի և հատիկաընդեղենի հիմնական մշակվող տեսակները ցորենը և գարին են, որոնք 2014 թվականին կազմել են բերքի 91.3%: Վերջին 5 տարիների



ընթացքում ակնհայտ աճել է հաճարի մշակումը, դրա արտադրական քանակը 2010 թվականից առ 2014 թվականը աճել է մոտ 2.3 անգամ: Այդուհանդերձ, Հայաստանը դեռևս ապահովում է հացահատիկի և հատիկաընդեղենի սպառման մոտավորապես 1/3-ը:

Բանջարեղենի և մրգերի արտադրությունը բուսաբուծության ամենամեծ մասն է կազմում: 2015 թվականին ընդհանուր արտադրական ծավալը կազմել է 2,040.0 տոննա (կարտոֆիլը ներառված չէ): Արմավիրի և Արարատի մարզերը արտադրում են բերքի 70%-ից ավելին: Բանջարեղենի տեսակներից Հայաստանը հիմնականում արտադրում է լոլիկ, որը կազմում է բերքի գրեթե կեսը, ինչպես նաև վարունգ, կաղամբ, գազար, սոխ, սխտոր և այլն:

Վերջին հինգ տարիների ընթացքում պտուղների և հատապտուղների բերքի քանակը աճել է 66.5%-ով, որի հիմնական խթանիչ է եղել այդ ոլորտում արտադրության մեջ ներդրումների քանակը, հատկապես հատապտղային ջերմոցային տնտեսությունների հիմնումը, ինչպես նաև մթերման բարձր պահանջարկը՝ պահածոների, հյութերի արտադրության նպատակով:

Վերջին տարիների ընթացքում աճ է գրանցվել նաև խաղողի արտադրության ոլորտում, որը հիմնականում օգտագործվում է գինու և կոնյակի արտադրության համար, պայմանավորված մթերման կայուն պահանջարկով:

Կարտոֆիլը հիմնական մշակաբույսերից մեկն է Հայաստանում պարենային անվտանգության տեսանկյունից: Հայաստանի գյուղատնտեսական հողերի մոտ 6.5%-ը օգտագործվում է կարտոֆիլի մշակման համար: 2015 թվականի տվյալներով՝ կարտոֆիլի բերքի 42%-ը արտադրում է Գեղարքունիքի մարզը, իսկ 15%-ը՝ Շիրակի մարզը:

Հայաստանում բուսաբուծության ոլորտում խոստումնալից է խաղողի, ծխախոտի, մրգերի և բանջարեղենի արտադրությունը, ինչը պայմանավորված է դրանց վերամշակման ոլորտում ներդրումների քանակով և արտահանման ծավալներով: Վերջին տարիներին զգալի ավելացել է ծխախոտի արտահանման ծավալները, ինչպես նաև մրգերի, բանջարեղենի և բույսերի վերամշակման արդյունքում ստացված սննդամթերքի արտահանման ծավալները:

**Անասնաբուծությունը** կազմում է Հայաստանի գյուղատնտեսական համախառն արտադրանքի 39.5%-ը: Անասնաբուծության ոլորտում նույնպես արտադրանքի մեծ մասը ապահովում են գյուղացիական տնային տնտեսությունները՝ 90%-ից ավելին:

Առևտրային կազմակերպությունները զբաղվում են հիմնականում թռչնաբուծության, ձվի և բրդի արտադրությամբ:

2011-2015թթ.-ի ընկած ժամանակահատվածում անասունների և թռչունների արտադրությունը աճել է 48.2 հազար տոննայով՝ 37.7%, իսկ կաթի արտադրությունը 127.1 հազ. տոննայով՝ 21.1%: Այս ոլորտներում նույնպես Գեղարքունիքի և Շիրակի մարզերը առաջատար են: Ստորև ներկայացված է անասունների, թռչունների ու կաթի արտադրության ծավալների բաշխումը ըստ մարզերի:

Ձվի արտադրությունը միակ ոլորտն է, որտեղ, ըստ 2014 թվականի տվյալների, արտադրության 31.8%-ը ապահովում են առևտրային կազմակերպությունները, սակայն արտադրական ծավալները նվազում են վերջին հինգ տարիների ընթացքում: Ընդհանուր առմամբ ձվի արտադրության ծավալները 2011-2015 թվականների ընթացքում նշանակալի փոփոխության չեն ենթարկվել:

### **Առկա խնդիրները. գյուղտեխնիկա, որակավորված մասնագետներ**

Չնայած արձանագրած չափավոր աճին՝ գյուղատնտեսությունը դեռևս հանդիսանում է Հայաստանի տնտեսության առավել խոցելի ոլորտներից մեկը, որը կարիք ունի հետևողական պետական քաղաքականության: Ոլորտը դեռևս չի կարողանում ապահովել Հայաստանի պարենային կարիքները, և կառավարության սուբսիդավորման կարիքը մեծ է: Կան բազմաթիվ խնդիրներ և մարտահրավերներ, որոնք դեռևս լուծված չեն:

Խնդիրները, որոնք առկա են Հայաստանի բոլոր մարզերում հետևյալն են.

- Փոքր, մասնատված հողակտորների առկայությունը,
- Գյուղատնտեսական համարժեք ենթակառուցվածքների՝ մասնավորապես նոր (կամ գոնե աշխատող) գյուղատնտեսական տեխնիկայի, սարքավորումների, վերամշակման, պահեստավորման համակարգերի անբավարարությունը, դրանց ֆիզիկական և բարոյական մաշվածությունը,
- Առկա է ագրո ներդրանքի՝ սերմերի, տնկիների, բուժանյութերի, պարարտանյութերի, վառելիքի, ինչպես նաև ագրոնոմիական մասնագիտացված ծառայությունների հասանելիության և որակի խնդիր,
- Ժամանակակից գյուղատնտեսական մեթոդների և տեխնոլոգիաների անբավարար մակարդակ, մշակության էքստենսիվ մեթոդների կիրառում, ցածր մասնագիտացում,

- Անբավարար ոռոգում,
- Շուկայական ենթակառուցվածքների թերզարգացածություն,
- Ֆինանսական ռեսուրսների դժվարամատչելիություն,
- Բնակլիմայական ռիսկերից ապահովագրության բացակայություն:

### Աղյուսակ 3. ՀՀ-ում առկա գյուղատնտեսական տեխնիկան 2011-2015

Անվանում	2011		2013		2015	
	Ընդ.	Սարքին	Ընդ.	Սարքին	Ընդ.	Սարքին
Տրակտորներ	14558	11327	14783	11656	15115	11891
Բեռնատար ավտոմեքենաներ	15600	11857	15251	11576	15066	11583
Տրակտորային գութաններ	3716	3351	3843	3385	3949	3461
Տրակտորային շարքացաններ	1839	1609	1856	1619	1857	1578
Կուլտիվատորներ	2138	1826	2244	1876	2289	1922
Հավաքիչ մամլիչներ	1454	1260	1575	1356	1700	1422
Տրակտորային կցասայլակներ	6026	5278	6099	5339	6142	5336
Հացահատիկահավաք կոմբայններ	1367	1054	1355	1011	1355	1012
Կերահավաք կոմբայններ	324	230	376	272	407	303
Հատիկագտիչ մեքենաներ	433	364	427	372	423	361
Տրակտորային խոտհնձիչներ	1922	1661	2030	1798	2080	1756

2015 թվականի հունվարի 1-ի դրությամբ Հայաստանում առկա է 50,383 միավոր գյուղտեխնիկա, որից սարքին վիճակում են գտնվում 40,625 հատը՝ 80.6%-ը: Ինչպես երևում է աղյուսակ 3-ից, վերջին հինգ տարիների ընթացքում ընդհանրացված տեսքով գյուղտեխնիկայի կտրուկ աճ չի գրանցվել:

Ամենաշատ միավոր գյուղտեխնիկա ունի Գեղարքունիքի մարզը, որը կազմում է ընդհանուր գյուղտեխնիկայի 17%-ը, իսկ ամենաքիչը՝ Վայոց Ձորի մարզը որը կազմում է 4% (չհաշված Երևան քաղաքը):

Բացի գյուղտեխնիկայի մեծ պահանջարկից Հայաստանը ունի նաև որակավորված մասնագետների կարիք, որոնք մասնագիտացված են արդի գյուղատնտեսության տարբեր ոլորտներում: Հայաստանում այսօր մասնագիտացում պահանջող գյուղատնտեսական ոլորտներում կան խիստ սահմանափակ թվով նեղ մասնագետներ, օրինակ ջերմոցային տնտեսությունների, մեղվապահության, այգեգործության և այլն: Մեծ պահանջարկ կա նաև ագրոբիզնեսի որակավորված մասնագետների՝ կառավարիչների, խորհրդատուների: Գյուղատնտեսությամբ

զբաղվող տնտեսությունները նույապես ունեն հմտությունների բարելավման և կատարելագործման կարիք, ինչի մասին վկայում են վերջին տարիների ընթացքում իրականացված ծրագրերը, որոնց հիմնական բաղադրիչ են կազմում հմտությունների զարգացումը՝ դասընթացների և վերապատրաստման միջոցով:

Հայաստանի ազգային ագրարային համալսարանը հանրապետության ագրոպարենային համակարգի համար մասնագետներ պատրաստող միակ ԲՈՒՀ-ն է: Այն ունի մասնաճյուղեր Վանաձոր, Սիսիան և Գյումրի քաղաքներում: Համալսարանը նաև ունի կից Ագրոբիզնեսի ուսուցման կենտրոն, որը ստեղծվել է Տեխասի Էյ ընդ Էմ համալսարանի հետ համատեղ: Կենտրոնը պատրաստում է ագրոբիզնեսի տնտեսագիտության բնագավառի մասնագետներ: Վերջերս համալսարանի «Ագրարմենեջմենթ» մասնագիտությունը Գերմանիայի Դաշնությունում ստացավ միջազգային հավատարմագրում:

### **Պետական քաղաքականություն և համագործակցություն**

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունը գործադիր իշխանության հանրապետական մարմին է, որը մշակում և իրականացնում է ագրոպարենային ոլորտի, գյուղատնտեսական բնագավառում միջպետական համագործակցության, անտառաբուծության, բուսաբուծության, անասնաբուծության, ոռոգման, հողերի օգտագործման արդյունավետության բարձրացման և հողաբարելավման ծրագրեր:

Գյուղատնտեսության նախարարությունն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրական և այլ իրավական ակտերի համապատասխան: Նախարարության առանձնացված ստորաբաժանումներ են համարվում «Գյուղատնտեսական տեխնիկայի պետական տեսչությունը», «Զրային տնտեսության պետական կոմիտեն», «Սննդամթերքի անվտանգության պետական ծառայությունը» և «Լիցենզավորման կենտրոն» գործակալությունը:

Նախարարությունը մշակում և իրականացնում է գյուղատնտեսության կայուն զարգացմանն ուղղված ռազմավարություն, որը արտահայտում է գյուղատնտեսության ներկայիս վիճակը և վերաբերվում է առաջնային խնդիրներին, ինչպիսիք են ագրոպարենային ոլորտը, գյուղական համայնքների զարգացումը և պետական աջակցությունը՝ ստեղծելու օրինական դաշտ և նպաստավոր պայմաններ գյուղատնտեսության ոլորտում ներդրումների համար, գյուղական համայնքների ինֆրաստրուկտուրան զարգացնելու, գյուղատնտեսական հետազոտություններին և զարգացմանը խրախուսելու համար:

- Գյուղատնտեսության նախարարությունը, ըստ ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 5-ին ընդունած N 1476-Ն որոշման, ամրագրել է գյուղատնտեսության և գյուղի զարգացմանն ուղղված պետական քաղաքականության հիմնական ուղղությունները 2010-2020 թվականների ռազմավարության համար: Այն ուղղված է ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքների հաղթահարմանը և հակաճգնաժամային մեխանիզմների ձևավորմանը՝ ճյուղի արդիականացման և մրցունակության բարձրացման միջոցով: Երկրի տնտեսության և ագրոպարենային անվտանգության համար գյուղատնտեսության կարևորությունը գնահատելով, Հայաստանի Կառավարությունը շեշտում է պետության օժանդակության կարևորությունը: Այդ ռազմավարության թիրախային ուղղություններից մեկն էլ գյուղատնտեսական կոոպերատիվների զարգացումն է:

Հաշվի առնելով ոլորտի զարգացման բազմաթիվ կարիքները՝ Գյուղատնտեսության Նախարարությունը իրականացնում է ոլորտին ուղղված սեփական ծրագրերը, ինչպես նաև ձգտում է ստանալ աջակցություն միջազգային կազմակերպությունների կողմից:

Սեփական ծրագրերը արդյունավետ իրականացնելու համար նախարարությանը կից կառավարության որոշմամբ գործում է «Գյուղատնտեսական Ծրագրերի Իրականացման Գրասենյակ» ՊՀ-ն, որը 1997 թվականից իրականացրել է 6 գյուղատնտեսական ծրագրեր և «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ն, որը մի շարք ծրագրեր է իրականացրել՝ հիմնականում «Գյուղատնտեսության Զարգացման Միջազգային հիմնադրամ»-ի կողմից տրամադրված փոխառությունների շնորհիվ, որոնք հիմնականում ուղղված են եղել ենթակառուցվածքների բարելավմանը:

Գյուղատնտեսության նախարարությունը Հայաստանի Հանրապետության կառավարության անունից անդամակցում է մի շարք միջազգային կազմակերպությունների, որոնք մեծ ներդրում ունեն գյուղատնտեսության և գյուղական համայնքների զարգացման գործում, ինչպիսիք են.

**Միավորված ազգերի պարենի և գյուղատնտեսության կազմակերպությունը**, որը հիմնականում զբաղվում է գյուղատնտեսության բնագավառի ռազմավարությունների մշակմամբ, մոնիթորինգով և գնահատմամբ: Իրականացվում են գյուղատնտեսության կայուն զարգացմանն ուղղված ծրագրեր՝ ազգային առաջնայնություններից ելնելով, աջակցում է գյուղատնտեսության բնագավառում

բացասական գործոնների ազդեցության նվազեցման ծրագրերի իրագործմանը և տեղեկատվության մատչելիության բարձրացմանը:

**Կողքս Ալիմենտարիուս**, որը ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպության /FAO/ և ՄԱԿ-ի առողջապահության կազմակերպության /WHO/ կողմից համատեղ ստեղծված կառույց է, որը սննդամթերքի ստանդարտների և դրանց վերաբերող տեքստերի հավաքածու է: Դրանք նպատակ ունեն պաշտպանելու սպառողների առողջությունը և երաշխավորելու սննդամթերքի արդար առևտուրը:

**Գյուղատնտեսության Զարգացման Միջազգային Հիմնադրամը (IFAD)**, որի հիմնական նպատակն է գյուղական բնակչության շրջանում աղքատության դեմ պայքարը: 1995 թվականից ի վեր ԳԶՄՀ-ի միջոցներով Հայաստանի Հանրապետությունում իրականացվել և իրականացվում են թվով 6 ծրագրեր՝ 78.2 մլն ԱՄՆ դոլար ընդհանուր արժողությամբ: Այդ միջոցները հատկապես կենտրոնացվում են երկրի ամենաաղքատ գյուղական շրջաններում, հիմնականում՝ բարձրավանդակներում և սահմանամերձ շրջաններում: Ներդրումների նպատակը արտադրության և արտադրողականության ավելացումն է մասնավոր հատվածի զարգացման միջոցով, ինչը դիտարկվում է որպես աղքատության կրճատման հիմնական գործիք:

**Համաշխարհային Բանկը**, որի առաքելությունն է Հայաստանում խթանել տնտեսական աճ, ստեղծել աշխատատեղեր և բարելավել սոցիալական ծառայությունների մատուցման ոլորտը: Այս նպատակն իրականացվում է բազմաթիվ ծրագրերի ֆինանսավորման, վերլուծության և խորհրդատվության տրամադրման միջոցով, որոնք ուղղորդիչ դեր են ստանձնում երկրի զարգացման օրակարգում:

**Անկախ Պետությունների Համագործակցության ազրոպարենային հարցերի միջկառավարական խորհրդը**, որին անդամակցության նպատակն է ազրոարդյունաբերական արտադրության ինտեգրացումը, ընդհանուր տնտեսական տարածքի կազմակերպումը, ավանդական տնտեսական, առևտրական և գիտատեխնիկական կապերի զարգացումը:

**Հեյֆեր Միջազգային կազմակերպությունը** շահույթ չհետապնդող կազմակերպություն է, որն ուղղված է վերացնելու աղքատությունն ու սովը՝ կայուն արժեքների վրա հիմնված և համակարգված համայնքների զարգացման միջոցով: Հեյֆերը կարիքավոր ընտանիքներին տրամադրում է անասուններ, ինչին զուգահեռ՝ գյուղատնտեսական թեմաներով ուսուցումներ է կազմակերպում նրանց համար: Այս

պարագայում նպատակն է ինքնաբավության ապահովման ուղիների բացահայտումը:

**Խաղողի և գինու միջազգային կազմակերպություն (OIV)**, որը գիտական և տեխնիկական բնույթի միջազգային կազմակերպություն է: Վերջինս իր անդամներին հնարավորություն է տալիս տեղեկանալ խաղողագործության և գինեգործության ոլորտներում իրականացվող միջոցառումների մասին, որոնք միտված են այս բնագավառի դերակատարողներին (արտադրողների, սպառողներ և այլ մասնակիցներ) աջակցելու հետևյալ հարցերի շուրջ՝ գոյություն ունեցող գործընթացների ու ստանդարտների ներառաշնակեցում միջազգային պահանջներին, նոր միջազգային ստանդարտներին նախապատրաստում, խաղողագործության և գինեգործության արտադրության և շուկայահանման պայմանների բարելավում: Հայաստանը OIV անդամ է 2014 թվականից՝ 13.500 եվրո տարեկան անդամավճարով:

**Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպություն (ՄՏՏՀ)**, որին Հայաստանը անդամակցում է 1992 թվականից, և որը կոչված է Սևծովյան տարածաշրջանը տնտեսական համագործակցության միջոցով վերածելու խաղաղության, կայունության և բարգավաճման գոտու:

Նախարարությունը 2011 թվականից համագործակցում է **Զարգացման և Միջազգային Համագործակցության Շվեյցարական հիմնադրամի** հետ, որի հետ Սյունիքի մարզում իրականացրել է երեք հիմնական ծրագիր՝ ուղղված անասնաբուժական ծառայությունների տեխնիկական և ինստիտուցիոնալ աջակցությանը, Մեղրիի գյուղական շրջանների զարգացմանը և անասնապահության զարգացմանը:

Ներկայումս իրականացվող խոշոր ծրագիր է՝ «**Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության**» (CARMAC) երկրորդ ծրագիրը, որը իրականացվում է ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Գյուղատնտեսական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի կողմից: Ծրագրի հիմնական նպատակներն են բարելավել արոտավայրերի և անասնապահության համակարգերի արտադրողականությունն ու կայունությունը թիրախային համայնքներում և ապահովել ընտրված բարձրարժեք ագրոպարենային արժեշտիչներում արտադրվող և շուկայահանվող արտադրանքի ծավալների աճը, ինչպես նաև պետական կառույցների կարողությունների հզորացումը: Արոտավայրերի/անասնապահության կայուն կառավարման ծրագրերի ներքո Հայաստանի 8 մարզերում նախատեսվ է ստեղծել արոտավայրեր օգտագործողների

սպառողական կոոպերատիվներ (ԱՕԿ)՝ շուրջ 100 համայնքներում, որտեղ առկա են արոտավայրերի զգալի պաշարներ: Բացի այդ նախատեսվում է կազմավորել Համայնքների արոտավայրերի կառավարման և անասնապահության զարգացման կոմիտե (ՀԱԿԱԶԿ): Ծրագրը նախատեսվում է իրականացնել 2015-2019 թվականների ընթացքում: Այն իրականացվում է ՀԲ «Միջազգային զարգացման ընկերակցության» (IDA) վարկի, «Վերակառուցման և զարգացման միջազգային բանկ»-ի (IBRD) փոխառության, ՀՀ կառավարության և շահառուների համաֆինանսավորմամբ: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 42.67 մլն ԱՄՆ դոլար:

Նախարարությունը համագործակցում է նաև տարբեր միջազգային գիտական հաստատությունների հետ՝ Բույսերի գենետիկական ռեսուրսների միջազգային ինստիտուտ (IPGRI) և Չորային գոտիներում գյուղատնտեսական հետազոտությունների միջազգային կենտրոն (ICARDA): Այն նաև անդամակցում է Պարենի և գյուղատնտեսության գենետիկական ռեսուրսների միջազգային համաձայնագրին (ITPGRFA), Բույսերի պաշտպանության միջազգային կոնվենցիային (IPPC):

### **Գյուղատնտեսության վարկավորում ֆինանսական կազմակերպությունների կողմից**


Բացի պետության և միջազգային կառույցների կողմից իրականացվող աջակցման ծրագրերից, գյուղատնտեսության զարգացման կարևորագույն գործիք է համարվում առևտրային և վարկային կազմակերպությունների կողմից տրամադրվող գյուղատնտեսական վարկերը: Չնայած նրան, որ գյուղատնտեսական վարկերը համարվում են զարգացման կարևորագույն գործիք, դրանք իրենց մեջ պարունակում են բավական մեծ ռիսկեր և բավական ծախսատար են: Ինչպես երևում է Պատկեր 4-ից, վերջին տաս տարիների ընթացքում գյուղատնտեսական նպատակով տրամադրվող վարկերի ծավալը տարեցտարի աճում է:

Առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից ռիսկերի կառավարումը և մոնիտորինգի կազմակերպումը ուղղված վարկերի նպատակայնությանը այն ճշգրտության վրա չէ, որպեսզի հնարավոր լինի գնահատել դրանց համեմատական ազդեցությունը գյուղատնտեսության զարգացման և համախառն ներքին արդյունքի վրա: Գյուղատնտեսական համախառն արտադրանքը, ի թիվս այլ գործոնների, բավականին զգայուն է



Ֆինանսավորման նկատմամբ և մատչելի պայմաններով ֆինանսավորման հասանելիությունը կարող է հապես նպաստել գյուղատնտեսության հետագա աճին:


**Պատկեր 4. ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրամադրված գյուղատնտեսական վարկերը, 2006-2015թթ., մլն. ՀՀ դրամ**



Հաշվի առնելով ՀՀ-ի գյուղատնտեսության զարգացման պայմանների անբարենպաստ լինելը՝ բնակլիմայական պայմանները, ցածր բերքատվությունը և ապահովագրության բացակայությունը, խիստ կարևոր է նաև վարկային ռեսուրսների տրամադրման պայմանները, որոնցով տեղաբաշխվում են այդ միջոցները գյուղացիական տնտեսություններին: Ինչպես արտարժույթով, այնպես էլ ՀՀ դրամով տրամադրվող գյուղատնտեսական վարկերի անվանական տոկոսադրույքները բարձր են՝ տատանվելով տարեկան 8-24%-ի սահմաններում և հիմնականում տրամադրվում են գրավի դիմաց: Նշված գյուղ. վարկերի փաստացի տոկոսադրույքները, ինչպես բացահայտում է ՀՀ Կենտրոնական բանկի «Ֆինանսական օգնական» համակարգը, սկսվում են 12%-ից և կարող են հասնել տարեկան մինչև 70%-ի: Տրամադրված գյուղատնտեսական վարկերը գրեթե հավասարապես ուղղված են բուսաբուծությանը և անասնաբուծությանը: Համեմատության համար ներկայացնենք Համաշխարհային բանկի վիճակագրությունը Հայաստանում, Վրաստանում և Մոլդովայում փոխառության

միջին տոկոսադրույքների վերաբերյալ (Ղազախստանի վերաբերյալ տեղեկատվությունն առկա չէ):

**Պատկեր 5. Փոխառության միջին տոկոսադրույքները (Հայաստան, Վրաստան և Մոլդովա)**



### Կոոպերատիվներ և առևտրային կազմակերպություններ

Գյուղատնտեսության ոլորտում տնտեսական եկամտաբերության հասնելու ճանապարհին գոյություն ունեն խնդիրներ և սահմանափակումներ, որոնք նպատակահարմար չէ և երբեմն իրատեսական չէ լուծել անհատապես: Դրանց լուծման համար լավագույն գործիքը կարող է դառնալ ընդհանուր խնդիրներ ունեցող մարդկանց խումբ ձևավորելը, որի վառ օրինակ են կոոպերատիվները: Կոոպերատիվների ստեղծման հիմնական նպատակը ոչ միայն առավելագույն շահույթ ստանալն է: Վերջիններս կոչված են նաև պաշտպանելու ֆերմերների որոշակի շահեր և իրավունքներ: Գյուղատնտեսական կոոպերատիվները ստեղծվում են լուծելու այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են՝ ավելի շատ ռեսուրսներ մոբիլիզացնելը, ապրանքներ և ծառայություններ գնելու համար առավել շահեկան հնարավորություններ ստեղծելը, ավելի արդյունավետ բիզնես վարելը, շատ դրամական և ռեսուրսներ պահանջող հնարավորություններից օգտվելը:

Հայաստանի գյուղատնտեսության ոլորտում առկա խնդիրների բնույթից ակնհայտ է, որ դրա հաջող զարգացումը էապես կփոխվի կոոպերատիվների տարածմամբ և

զարգացմամբ: Կոոպերատիվների տարածմանը և խթանմանն են ուղղված պետական և միջազգային բազմաթիվ ծրագրեր, որոնք կարող են հնարավորություն տալ ոլորտի բարելավման համար: Ֆերմերային կազմակերպությունների և կոոպերատիվների դերը, կարևորում է նաև ՀՀ կառավարությունը՝ պետական ռազմավարական ծրագրերում:

ԽՍՀՄ կազմալուծումից հետո հետխորհրդային Հայաստանի Հանրապետությունում ԽՍՀՄ այլ կառույցների հետ փլուզվեցին նաև նախկինում գոյություն ունեցող գյուղատնտեսական կոոպերատիվները: Այս գյուղատնտեսական կոոպերատիվների ադամակցությունը պարտադիր բնույթ էր կրում:

1993 թվականին ստեղծվեցին նոր սպառողական կոոպերատիվներ: 2015թ. հունվարի 1-ի դրությամբ ՀՀ-ում ըստ Պետական ռեգիստրի տվյալների գրանցված էին 3593 արտադրական և 389 սպառողական կոոպերատիվներ, 167 գյուղացիական կոլեկտիվ տնտեսություններ: Գյուղատնտեսական գործունեության մեջ ներգրավված են սպառողական կոոպերատիվները, որոնց ճնշող մեծամասնությունը ստեղծվել է ստանալով աջակցություն պետության կողմից իրականացվող զարգացման ծրագրերի և տարբեր գրանտային ծրագրերի շրջանակում: «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» ծրագրի (CARMAC, CARMAC 2) շրջանակներում հիմնվել են թվով 147 «Արտոգտագործողների միավորում» սպառողական կոոպերատիվներ, որոնց գործունեության հիմնական նպատակն արտավալյրերի կառավարման և բարելավման միջոցով անասնապահության արդյունավետության՝ անասնապահական տնտեսությունների եկամուտների ավելացումն է:

Հայաստանում կոոպերատիվների զարգացմանն են ուղղված մի շարք խոշոր միջազգային կազմակերպությունների աշխատանքները: Գյուղատնտեսության ոլորտում իրականացվող ծրագրերի հիմնական կոմպոնենտ է հանդիսանում ծրագրի արդյունքում սպառողական կոոպերատիվի ստեղծումը, քանի որ դրանք ապահովում են ծրագրերի կայունությունը:

Կոոպերատիվների զարգացման գործում Հայաստանում շատ մեծ ներդրում են ունեցել և ներկայումս էլ շարունակում են իրենց գործունեությունը և՛ միջազգային, և՛ տեղական հասարակական կազմակերպությունները, ինչպիսիք են Օքսֆամի, Վորլդ Վիժընի, Ամքորի, Պոզիտիվ Պլանետի Հայաստանյան գրասենյակները, Շեն ԲՀԿ-ն: Կոոպերատիվների զարգացմանը և տարածմանը աջակցում են նաև Եվրոպական Միության կողմից ֆինանսավորվող մի շարք ծրագրերը (ENPARD) և ՄԱԿ-ի զարգացման ծրագրերը: Տվյալ կառույցները ծրագրերը իրականացնում են

համագործակցելով թե՛ տեղական ինքնակառավարման, թե՛ նախարարության, թե՛ միմյանց հետ՝ հիմնականում համաֆինանսավորման պայմաններով:

ՕԲՍՖԱՄ-ի Հայաստանյան գրասենյակը իր գործունեությունն է ծավալում սկսած 1994 թվականից: ՕԲՍՖԱՄ Հայաստանը իր գործընկերների՝ «ԲԻ ԷՍ ՍԻ» Բիզնեսի Աջակցման Կենտրոնի, «Բանջարաբուստանային և Տեխնիկական Մշակաբույսերի Գիտական Կենտրոն» ՊՈԱԿ-ի և «Նոր Հորիզոն» Ունիվերսալ Վարկային Կազմակերպության հետ համատեղ Հայաստանի Հանրապետության Տավուշի և Վայոց Ձորի մարզերի գյուղերում իրականացնում է տարբեր սոցիալական եւ գյուղատնտեսության զարգացման ծրագրեր՝ ուղղված փոքր ֆերմերային տնտեսությունների բարելավմանը, գյուղատնտեսական կոոպերատիվների ստեղծմանն ու հզորացմանը, դրանց արտադրանքի հասանելիությանը շուկաներում: ՕԲՍՖԱՄ Հայաստանի աջակցությամբ ստեղծել են 21 սպառողական կոոպերատիվներ Տավուշի Ակնաղբյուր, Հաղթանակ, Ծաղկավան, Ենքավան, Լճկաձոր, Գոշ, Դիտավան. Գետահովիտ, Աչաջուր, Սևքար, Հովք, Պտղավան, Սարիգյուղ, Այգեհովիտ, Խաշթառակ, Կողբ համայնքներում և Վայոց Ձորի Ազատեկ, Զեդեա, Գոմք, Զառիթափ համայնքներում: Սպառողական կոոպերատիվների անդամներ են հանդիսանում հիմնականում միրգ-բանջարեղեն արտադրողները, որոնց կոոպերատիվի գործունեության ընթացքում հասանելի են դարձել ժամանակակից գյուղատնտեսական տեխնոլոգիաներ և սարքավորումներ (արևային չորանոցներ, ջերմատներ, կաթիլային ոռոգման համակարգեր, թարմ միրգ-բանջարեղենի սառնարանային պահպանման սարքավորումներ, ոչ ավանդական մշակաբույսեր և դրանց աճեցման տեխնոլոգիաներ, չրի պատրաստման արևային չորանոցներ և այլն): Նոր տեխնոլոգիաների շահագործման և կիրառման վերաբերյալ կազմակերպվել են գործնական դասընթացներ:

Վորլդ Վիժն միջազգային բարեգործական կազմակերպության կոչումն է բարեփոխել աղքատության մեջ ապրող երեխաների, նրանց ընտանիքների և համայնքների կյանքը: Վորլդ Վիժն Հայաստանի 13 «Տարածքային զարգացման ծրագրեր»-ի բաղկացուցիչ մաս են կազմում համայնքների տնտեսական զարգացման աջակցությունը: Տնտեսական Զարգացման ծրագրի շրջանակներում Թալինի տարածաշրջանում ստեղծել են 4 սպառողական կոոպերատիվներ՝ Արտենի (մրգերի արևային չորանոց), Ցամաքասար (կաթի հավաքման կետ), Ոսկեթաս (կաթի հավաքման կետ) և Զարինջա (գյուղատնտեսական մեքենաների միավորում) համայնքներում: Ծրագրերի շրջանակներում աջակցություն է տրամադրվում հիմնականում նախաձեռնող փոքր գյուղատնտեսական խմբերին, որոնց

կարողությունների զարգացման արդյունքում հնարավոր է լինում նրանց սեփական նախաձեռնությամբ կոոպերատիվների ստեղծում:

ԱՄՔՈՐ միջազգային կազմակերպության Հայաստանում իր գործունեությունը ծավալում է 1997 թվականից և իրականացնում է գյուղատնտեսության զարգացմանն ուղղված ծրագրեր: Կազմակերպությունը հիմնականում գործունեություն է ծավալում Արարատի, Արմավիրի և Վայոց Ձորի մարզերում: Իրականացված ծրագրերը միտում ունեն զարգացնելու գործող կոոպերատիվների կարողությունները, ինչպես նաև ստեղծել նոր գյուղատնտեսական սպառողական կոոպերատիվների: Ծրագրերի շրջանակներում ստեղծվել են գյուղատնտեսական սպառողական կոոպերատիվներ Սալի, Վերնաշեն, Գլածոր համայնքներում և ջերմոցային տնտեսությունների կոոպերատիվներ Ագարակաձոր, Ակունք, Նոր Երզնկա համայնքներում:

Վերջերս «Պոզիտիվ Պլանետ» միջազգային կազմակերպությունը Երևանի Կոնյակի Գործարանի (Պեռնո Ռիկարի) և Հայ Օգնության Ֆոնդի հետ համատեղ նախաձեռնել է ֆերմերներին ուղղված կարողությունների բարելավման ծրագիր: Մասնավորապես, ընկերությունն աջակցել է Տավուշի մարզում իր փոքր խաղողագործներին՝ հիմնադրելու վեց կոոպերատիվներ, ինչը կօգնի նրանց հասնել անկախության և բարելավել իրենց եկամուտների կայունությունը: Այս ծրագրի շնորհիվ կոոպերատիվի անդամներին հասանելի են դարձել սեփական խաղողի այգիների ավելի լավ մշակման համար խիստ անհրաժեշտ կապիտալ ներդրումներ: Ծրագիրը մեկնարկել է 2014 թվականից և այդ ընթացքում ստեղծվել են սպառողական կոոպերատիվներ Այգեհովիտ, Պառավաքար, Վարազավան, Արծվաբերդ, Տավուշ, Վերին Ծաղկավան համայնքներում: Առաջիկա պլաններում նախատեսվում է ստեղծել նմանատիպ կոոպերատիվներ Տավուշի մարզի այլ համայնքներում, ինչպես նաև Արարատի մարզի համայնքներում:

Ինչ վերաբերում է արտադրական կոոպերատիվներին, ապա դրանց գործունեության մասին սույն հետազոտության շրջանակում տեղեկատվություն չի հավաքագրվել, քանի որ դրանք ներգրավված չեն գյուղատնտեսական արտադրության, գյուղատնտեսական սպասարկման ոլորտներում:

ՀՀ-ում գործում են մի քանի ֆերմերային կազմակերպություններ՝ Գյուղատնտեսական միությունների դաշնությունը, Ֆերմերների ազգային միությունը, Միս արտադրողների միությունը, Կաթ արտադրողների միությունը, Ագրարային գյուղացիական միությունը, Ֆերմերային շարժումը, Գյուղատնտեսական կոոպերատիվների միությունը, Օրգանական գյուղատնտեսության հայկական հիմնադրամը, Ջերմոցային տնտեսությունների միությունը և այլն: Չնայած կան

բազմաթիվ միություններ, կազմակերպվածության և համագործակցության մակարդակը դեռևս հեռու է անթերի լինելուց: Նրանցից շատերը դրամաշնորհային կողմնորոշվածություն ունեն, չունեն գործարարին բնորոշ մտածելակերպ, որը հարկավոր է բարեհաջող կերպով ապրանք արտադրելու և շուկայում իրացնելու համար: Ինչ վերաբերում է ֆերմերային կոոպերատիվներին, վերջին տարիների ընթացքում ջանքեր են գործադրվել նրանց ստեղծումն ու աճի խթանման համար: Նրանց թույլ կողմերից են հստակ տեսլականի բացակայությունը, վատ կառավարումը և ֆինանսական կայունությունը: Հարկավոր է ուշադրությունը կենտրոնացնել նրանց ներուժի զարգացման և կարողությունների հզորացման վրա:

### **Կոոպերատիվների գործունեությունը կարգավորող օրենքներ և իրավական ակտեր**

Չնայած այն բանին, որ գյուղատնտեսության զարգացումը ՀՀ կառավարության առաջնահերթ խնդիրներից է, չկա գյուղատնտեսական ոլորտը կարգավորող միասնական օրենք: Ոլորտը ներկայումս կարգավորվում է բազմաթիվ օրենքներով և իրավական ակտերով, ինչպես նաև միջազգային համաձայնագրերով: Գյուղատնտեսության ոլորտի կարգավորող հիմնական օրենքները են՝

- «Պետական գույքի մասնավորեցման/սեփականաշնորհման մասին» ՀՀ օրենք
- «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենք
- «Պարենային ձեռնարկությունների գրանցման, Ստանդարտացման մասին» ՀՀ օրենք
- «Փոքր և միջին ձեռնարկությունների պետական աջակցության մասին» ՀՀ օրենք
- «Օրգանական գյուղատնտեսության մասին» ՀՀ օրենք
- «Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին » ՀՀ օրենք

Վերջինս՝ Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին ՀՀ օրենքը, ընդունվել է 2015 թվականի դեկտեմբերի 21-ին, որով կարգավորվում է գյուղացիական կոոպերատիվների/արտադրող կազմակերպությունների կազմավորումն ու գործունեությունը: Սա թերևս կոոպերատիվների գործունեությունը կարգավորող միակ ամբողջական և համապարփակ օրենքն է: Այս օրենքից զատ, ներկայումս գործում են կոոպերատիվների գործունեության հետ առնչվող հետևյալ իրավական ակտերը.

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը (ՀՕ-239).

2. «Սպառողական կոոպերացիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (ՀՕ-91).
3. «Զրոգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (ՀՕ-374-Ն).
4. «Գյուղատնտեսական վարկային ակումբների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (ՀՕ-332).
5. «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (ՀՕ-169).
6. Հայաստանի Հանրապետության Նախագահի 2011թ. մայիսի 18-ի «Հայաստանի Հանրապետության պարենային անվտանգության ապահովման հայեցակարգը հաստատելու մասին» կարգադրությունը (ՆԿ-91-Ն).
7. Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011թ. հոկտեմբերի 13-ի «Հայաստանի Հանրապետության պարենային անվտանգության ապահովման հայեցակարգից բխող միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1522-Ն որոշումը.
8. Հայաստանի Հանրապետության Կառավարության 2009թ. նոյեմբերի 6-ի «Գյուղատնտեսական արտադրությամբ զբաղվող քաղաքացիների կողմից կնքվող համատեղ գործունեության պայմանագրի օրինակելի ձևը հաստատելու մասին» N1270-Ն որոշումը.
9. Հայաստանի Հանրապետության Կառավարության 2010թ. նոյեմբերի 4-ի «Հայաստանի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության 2010-2020թթ. կայուն զարգացման ռազմավարությունը և Հայաստանի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության 2010-2020թթ. կայուն զարգացման ռազմավարության կատարումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» N1476-Ն որոշումը.
10. Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011թ. նոյեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետության գյուղացիական տնտեսությունների խոշորացման հայեցակարգին և հայեցակարգի կատարումն ապահովող միջոցառումների ժամանակացույցին հավանություն տալու մասին» N43 արձանագրային որոշումը,
11. Հայաստանի Հանրապետության Կառավարության 2014թ. հունվարի 9-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի

գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները հաստատելու մասին» N 10-Ն որոշումը:

Վերոնշյալ ռեսուրսները և իրավական ակտերը սահմանում են գյուղատնտեսական կոոպերատիվների գործունեության հետ առնչվող որոշակի հարաբերությունները: Իսկ «Գյուղատնտեսական կոոպերատիվի մասին» ՀՀ օրենքը սահմանում և կարգավորում է.

- Գյուղատնտեսական կոոպերատիվի նպատակները՝ համագործակցությամբ հասնելու առկա ռեսուրսների ռացիոնալ օգտագործումը, անդամների նյութական և այլ կարիքների բավարարումը, նոր նախաձեռնությունների իրագործմանն ու գործունեության արդյունավետության բարձրացումը:
- Գյուղատնտեսական կոոպերատիվի գործունեության ուղղությունները՝ գյուղատնտեսական արտադրանքի արտադրությունը և իրացումը, գյուղատնտեսական անհրաժեշտ պարագաների և միջոցների մատակարարումը, սպասարկման ծառայությունների մատուցումը, գյուղատնտեսական արտադրանքի վերամշակումը, տարբեր գործունեության ուղղություններով հանդես գալը, առանձնացված ստորաբաժանումներ՝ մասնաճյուղեր և ներկայացուցչություններ ունենալը:
- Կոոպերատիվների միությունները, որոնք կարող են ստեղծվել կոոպերատիվներն իրենց գործունեության համակարգման, ընդհանուր շահերի ներկայացման և պաշտպանության, տեղեկատվական, խորհրդատվական ծառայությունների մատուցման, կոոպերատիվի անդամների և աշխատողների որակավորման բարձրացման, շուկայական վերլուծությունների իրականացման, անդամ կոոպերատիվների տեխնիկական աջակցության, կարողությունների հզորացման, մշտադիտարկման և ագրոպարենային համակարգում այլ գործունեություն արդյունավետ իրագործելու նպատակով:
- Կոոպերատիվի ստեղծումը
- Կոոպերատիվի հիմնադրումը և հիմնադիր ժողովը:
- Կոոպերատիվի կանոնադրությունը, որով սահմանվում է կոոպերատիվի անվանումը, գտնվելու վայրը, գործունեության նպատակը, պարտադիր և կամավոր պահուստային ֆոնդերի ձևավորումը և այլն:
- Կոոպերատիվների պետական գրանցումը, որը իրականացվում է իրավաբանական անձանց պետական գրանցումն իրականացնող մարմնի



կողմից՝ Հայաստանի Հանրապետության «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման» օրենքով սահմանված կարգով:

- Կոոպերատիվների անդամներին՝ նրանց իրավունքները և պարտականությունները: Կոոպերատիվի անդամ կարող են դառնալ իրավաբանական և տասնվեց տարին լրացած ֆիզիկական անձինք:
- Կոոպերատիվին անդամագրվելու և դրա դադարեցման կարգը
- Կոոպերատիվի կառավարումը՝ կառավարման մարմինները (բարձրագույն մարմին, գործադիր մարմին, դիտորդ խորհուրդ), ընդհանուր ժողովը և նրա իրավասությունները, ընդհանուր ժողովի գումարման կարգը, ընդհանուր ժողովի որոշումների ընդունման կարգը:
- Գործադիր մարմինը (վարչություն, նախագահ)՝ դրա ընտրությունը, կառավարման ժամկետները, գործառույթները և այլն:
- Վերստուգողը և վերստուգիչ հանձնաժողովը, ինչպես նաև դիտորդ խորհուրդը:
- Կոոպերատիվի գույքը՝ գույքի ձևավորման աղբյուրները, փայլը, ավելցուկի և շահույթի բաշխումը, անդամների գույքային պատասխանատվությունը:
- Կոոպերատիվի վերակազմակերպումը և լուծարումը, լուծարման կարգը
- Գյուղատնտեսական կոոպերացիայի բնագավառում պետական աջակցությունը՝ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների փոխհարաբերությունները, պետական աջակցության ուղղությունները:

Տվյալ ոլորտում կարգավորող համապարփակ օրենսդրական փաստաթղթի առկայությունը կարևորվում է, քանի որ այն հնարավորություն կտա ագրարային ոլորտում կիրառվող տնտեսվարման ձևերի կատարելագործմանը և կոոպերացիայի զարգացման ուղղությամբ համակարգված պետական քաղաքականության իրականացմանը: Օրենքի կիրառումից ակնկալվում են հետևյալ արդյունքները՝

- հստակեցում գյուղատնտեսական կոոպերացիայի զարգացման բնագավառում պետական քաղաքականության հիմնական ուղղություններում
- գյուղատնտեսական կոոպերատիվների ձևավորուման խթանում
- գյուղացիական տնտեսությունների գործունեության արդյունավետության, այնպես էլ ոլորտում տնտեսվարողների մրցունակության բարձրացում՝

արտադրական, մատակարարման, իրացման և այլ խնդիրների համատեղ լուծման արդյունքում

- երկրի պարենային անվտանգության մակարդակի բարձրացում
- կոոպերատիվների գործունեությունը կնպաստի նաև գյուղական համայնքների զարգացմանը:

Չնայած այն բանին, որ կոոպերատիվների զարգացումը ՀՀ կառավարության առաջնահերթ խնդիրներից է, սակայն ՀՀ գործող հարկային քաղաքականությունը, օրենքները, ենթաօրենսդրական ակտերը ոչնչով չեն սատարում գյուղացիական կոոպերատիվների/արտադրող կազմակերպությունների կազմավորմանը, գործունեությանը և զարգացմանը: ՀՀ գործող օրենսդրությամբ կոոպերատիվների համար նախատեսված չէ որևէ նորմ, որով դրանց կտրվեն հարկային կամ այլ արտոնություններ: Ավելին, սպառողական կոոպերատիվները, ունենալով ոչ առևտրային կազմակերպության կարգավիճակ, իրավունք չունեն ապրանքներ մատակարարել և ծառայություններ մատուցել ոչ անդամներին, ինչը հաճախ նվազեցնում է դրանց գործունեության ծախսարդյունավետությունը և հետևաբար կենսունակությունը:

Ինչ վերաբերում է գյուղատնտեսական կոոպերատիվների գործունեությունը կանոնակարգող «Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին» ՀՀ օրենքին, վերջինս թեև լիովին կարգավորում է դրանց գործունեությունը, սակայն կրկին չի նախատեսում արտոնություններ: Գյուղատնտեսական կոոպերատիվը առևտրային գործունեություն ծավալելու դեպքում դիտարկվում է որպես լիարժեքորեն հարկման ենթակա սուբյեկտ և գործում է բիզնեսին բնորոշ հարկային դաշտում: Համաձայն ՀՀ Պետական ռեգիստրից ստացված տեղեկատվության, 2016 թ. հունվարից ի վեր «Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին» ՀՀ նոր օրենքի շրջանակներում գրանցվել են Եվրամիության ENPARD-Armenia ծրագրի կողմից խթանված 45 գյուղատնտեսական կոոպերատիվներ:

Չնայած օրենսդրական կարգավորման դաշտում առկա մեծ ձեռքբերումներին, մասնավորապես «Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին» օրենքի ընդունմանը, որը հիմնականում արտացոլում է կոոպերատիվներին վերաբերող օրենսդրական կարգավորման միջազգային լավագույն փորձը, օրենքում առկա են բացեր, որոնք խաթարում են դրանց բնականոն գործունեությանը: Մասնավորապես, սույն օրենքի մեջ նշված չէ, թե գյուղատնտեսական կոոպերատիվը իրավաբանական անձի ինչ կարգավիճակ պետք է ունենա՝ առևտրային, թե ոչ առևտրային: Վերջինով է պայմանավորվում, թե կոոպերատիվը

հարկային ինչպիսի դաշտում պետք է գործի: Տարանջատված չեն կոոպերատիվի ներքին (շահույթ չհետապնդող) և արտաքին գործարքների հարկման առանձնահատկությունները: Այս հանգամանքը պատճառ է հանդիսացել, որ ENPARD-ի աջակցությամբ ստեղծված կոոպերատիվները գրանցման գործընթացն իրականացնելուն պես դիմում են ներկայացրել հարկային մարմիններին իրենց գործունեությունը դադարեցնելու մասին: Շահագրգիռ կազմակերպությունները, կոոպերացիայի խթանմամբ զբաղվող կառույցները դիմել են Կառավարությանը օրենսդրական փոփոխություններ կատարելու առաջարկությամբ, սակայն խնդիրը դեռևս լուծված չէ:

Կոոպերատիվների զարգացման և կայունության համար էական նշանակություն կունենան ոչ միայն օրենսդրական դաշտի բարեփոխումները, այլ նաև տնտեսական բարեփոխումները, ինչպիսիք են՝ պետական գնումների ժամանակ կոոպերատիվներին տրվող արտոնությունները, զեղչերը գյուղատնտեսական տեխնիկայի գնման համար, օժանդակությունը ապրանքների վաճառքի, մարքեթինգի հարցում և այլն:


## ԲԱԺԻՆ 2. ՔԱՆԱԿԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

### Հարցվողների սոցիալ-տնտեսական բնութագիրը

Ինչպես նշվել է հաշվետվության ներածական բաժնում, հարցումն իրականացվել է բուսաբուծությամբ զբաղվող 300 տնային տնտեսությունների շրջանում, որոնցից 100-ը անդամակցում էին գյուղատնտեսական կոոպերատիվի: Հարցմանը մասնակցել է տնային տնտեսության այն անդամը, ով անմիջականորեն ներգրավված է հիմնական գյուղատնտեսական արտադրանքի արտադրությանը և/կամ վաճառքին և լավագույնս տեղեկացված է բոլոր մանրամասներին:

Հարցվողների 54%-ը տղամարդ էին, 46%-ը՝ կին, իսկ հարցվողների միջին տարիքը 49 էր: Պատկեր 1-ում ամփոփված է հարցվողների սեռատարիքային կազմը:


### Պատկեր 1. Հարցվողների սեռատարիքային կազմը:



Հարցված տնային տնտեսությունները միջինում բաղկացած էին 5 անդամից:

Հարցմանը մեծամասամբ մասնակցել է տնային տնտեսության գլխավորը կամ նրա կինը/ամուսինը (տե՛ս Պատկեր 2): Տնային տնտեսությունների գլխավորների 83%-ը տղամարդ էին, 17%-ը՝ կին:

**Պատկեր 2. Հարցվողների ընտանեկան կարգավիճակը:**




Հարցված տնային տնտեսությունների գլխավորները միջինում 28 տարի ներգրավված են եղել գյուղատնտեսական աշխատանքներում, իսկ հարցվողներն անձամբ բուսաբուծական արտադրությամբ զբաղվում են միջինում 22 տարի (ընդ որում բուսաբուծությամբ զբաղվելու միջին տևողությունը նույնն է կոոպերատիվների անդամների և կոոպերատիվների չանդամակցող ֆերմերների շրջանում):

Մասնագիտական կրթություն (միջին մասնագիտական կամ բարձրագույն) ունի տնային տնտեսության գլխավորների 60%-ը, ընդ որում գյուղատնտեսական մասնագիտական կրթություն՝ ընդամենը 7%-ը (տե՛ս Պատկեր 3): Քանի որ մասնագիտական կրթություն ունեցողների թիվը փոքր էր, իսկ մասնագիտությունները՝ բավականին բազմազան, ստորև պարզապես թվարկում ենք ամենահաճախը հանդիպած մասնագիտությունները:


- Վարորդ
- Մանկավարժ
- Շինարար
- Ինժեներ
- Հաշվապահ
- Մեխանիկ
- Էլեկտրիկ
- Անասնաբույժ

### Պատկեր 3. Տնային տնտեսության գլխավորի կրթությունը




Ներկայումս տնային տնտեսության գլխավորների մեծամասնությունը (61%) ինքնազբաղված է գյուղատնտեսության ոլորտում:

**Պատկեր 4. Տնային տնտեսության գլխավորի հիմնական զբաղվածությունը**



Տնային տնտեսությունների ճնշող մեծամասնությունը (85%) գյուղատնտեսությունից բացի ունի եկամտի այլ աղբյուր, հիմնականում՝ աշխատավարձ կամ թոշակ:


**Պատկեր 5. Տնային տնտեսության եկամտի աղբյուրները (գյուղատնտեսությունից բացի)**



## Հիմնական բուսաբուծական արտադրանքը

Ըստ հարցման տվյալների, բուսաբուծական արտադրության չորս հիմնական (ըստ ստացված եկամտի) ոլորտներն են խաղողը, բանջարեղենը, հացահատիկային մշակաբույսերը և մրգերը: Ընդ որում խաղողագործությունը և հացահատիկների արտադրությունը առավել լայն տարածում ունեն կոոպերատիվների անդամների շրջանում, իսկ բանջարեղենի և մրգի արտադրությունը՝ կոոպերատիվների անդամ չհանդիսացող ֆերմերների շրջանում (տե՛ս Պատկեր 6):

### Պատկեր 6. Բուսաբուծական արտադրության հիմնական ոլորտը՝ ըստ եկամտի



Հարցվողներին խնդրել էինք նաև մանրամասնել հիմնական բուսաբուծական ոլորտի ճյուղերը: Ստորև բերված են չորս հիմնական ոլորտների հաճախակի նշված ճյուղերը:

### Խաղող

- Տեխնիկական սորտեր (խաղող արտադրողների 60%)
- Սեղանի սորտեր (խաղող արտադրողների 49%)



## Բանջարեղեն

- Կարտոֆիլ (բանջարեղեն արտադրողների 52%)
- Լոբի (բանջարեղեն արտադրողների 30%)
- Լոլիկ (բանջարեղեն արտադրողների 21%)
- Վարունգ (բանջարեղեն արտադրողների 15%)
- Բազուկ (բանջարեղեն արտադրողների 12%)
- Կաղամբ (բանջարեղեն արտադրողների 10%)

## Հացահատիկային մշակաբույսեր

- Ցորեն (հացահատիկ արտադրողների 85%)
- Գարի (հացահատիկ արտադրողների 71%)

## Մրգեր

- Ծիրան (միրգ արտադրողների 52%)
- Խնձոր (միրգ արտադրողների 38%)
- Դեղձ (միրգ արտադրողների 25%)
- Հոն (միրգ արտադրողների 17%)
- Տանձ (միրգ արտադրողների 15%)
- Բալ/կեռաս (միրգ արտադրողների 15%)
- Սալոր (միրգ արտադրողների 13%)

## Հողատարածքի բնութագիրը և այլ առանձնահատկություններ

Հարցված տնային տնտեսությունները միջինում ունեն 2.9 հեկտար հողատարածք, որից 2.7 հեկտարը՝ վարելահող և 0.2 հեկտարը՝ տնամերձ հողատարածք: Հատկանշական է, որ կոոպերատիվ ունեցող համայնքներում ֆերմերների հողատարածքը զգալիորեն մեծ է կոոպերատիվ չունեցող համայնքների համեմատ (համապատասխանաբար՝ 3.3 հա և 2.1 հա):

Միաժամանակ, թեև կոոպերատիվ ունեցող համայնքներում կոոպերատիվի անդամները միջինում ավելի մեծ հողատարածք ունեն, քան կոոպերատիվին չանդամակցող ֆերմերները, տարբերությունը զգալի չէ (3.6 հա և 3 հա):


**Աղյուսակ 1. Հարցված տնային տնտեսությունների հողատարածքը (2016թ. միջինացված)**

Հողատարածք (հեկտար)	Բոլոր հարցվողները	Կոոպերատիվի անդամներ	Կոոպերատիվի չանդամակցող ֆերմերներ	Գյուղում կոոպերատիվ չկա
<b>Վարելահող</b>	2.71	3.34	2.86	1.91
<i>որից՝ սեփական</i>	2.09	2.37	2.17	1.71
<i>վարձակալված</i>	0.48	0.67	0.59	0.18
<i>անհատույց օգտագործվող</i>	0.14	0.30	0.10	0.02
<b>Տնամերձ հողատարածք</b>	0.20	0.25	0.17	0.19
<b>Ընդհանուր հողատարածք</b>	2.91	3.59	3.03	2.10

Այդուհանդերձ, Պատկեր 7-ը ցույց է տալիս, որ 2 հեկտարից ավել վարելահող ունի կոոպերատիվի անդամակցող ֆերմերների մեծամասնությունը (57%), նույն համայնքներում կոոպերատիվի չանդամակցող ֆերմերների 45%-ը, իսկ կոոպերատիվ չունեցող համայնքներում՝ ֆերմերների ընդամենը 33%-ը:

Երկու տվյալները համադրելով կարելի է ենթադրել, որ հողատարածքի չափը ազդեցություն ունի թե՛ կոոպերատիվին անդամակցելու որոշման, և թե՛ կոոպերատիվ ստեղծելու մտադրության վրա, սակայն վերջինիս վրա ազդեցությունն ավելի մեծ է:


**Պատկեր 7. Հարցված տնային տնտեսությունների կողմից օգտագործվող վարելահողը (2016թ.)**



Բոլոր հարցվողներին խնդրել էինք տալ օգտագործվող հողի բաշխվածքը՝ ըստ բուսաբուծական արտադրանքի տեսակների:

Նախ հարկ է նշել, որ ըստ հարցման տվյալների հարցվողների ընդհանուր հողատարածքի 16%-ը չի մշակվում: Ընդ որում, չմշակվող հողատարածքի մասնաբաժինը ամենացածրն է կոոպերատիվի անդամների շրջանում (տե՛ս Պատկեր 8):

### Պատկեր 8. Չմշակվող հողատարածքի մասնաբաժինը




Որպես հողը չմշակելու պատճառ ամենահաճախը նշվել է ոռոգման անհնարինությունը (27%): Այլ պատճառների թվում էին գյուղատնտեսական տեխնիկայի պակասը, հողի վատ դիրքը (հեռավորությունը, սահմանամերձ լինելը), հողի վատ որակը, ֆինանսական միջոցների պակասը և տնային տնտեսության անդամների առողջական վիճակը:

Աղյուսակ 2-ում ամփոփված են հողատարածքի կառուցվածքի վերաբերյալ՝ մեկ տնային տնտեսության հաշվով միջինացված տվյալները, իսկ Պատկեր 9-ում՝ բուսաբուծության տարբեր ոլորտներում ներգրավված տնային տնտեսությունների մասնաբաժինները:

**Աղյուսակ 2. Օգտագործվող հողատարածքի կառուցվածքը (միջինացված)**


Հողատարածք (քմ)	Բոլոր հարցվողները	Կոոպերատիվի անդամներ	Կոոպերատիվի չանդամակցող ֆերմերներ	Գյուղում կոոպերատիվ չկա
Հացահատիկային մշակաբույսեր	10,300	15,800	11,400	4,000
Տեխնիկական մշակաբույսեր	7,500	10,000	7,500	5,100
Բանջարեղեն	2,300	1,800	2,000	3,000
Մրգեր	1,800	2,300	1,500	1,600
Խաղող	1,700	2,100	1,800	1,200
Հատապտուղներ	300	300	500	100
Այլ (ընկուզեղեն , ծաղիկներ, սերմեր, տնկիներ, կանաչիներ)	300	700	200	100
Զմշակվող հողատարածք	4,800	3,000	5,400	5,900
<b>Ընդհանուր հողատարածք</b>	<b>29,000</b>	<b>36,000</b>	<b>30,300</b>	<b>21,000</b>

**Պատկեր 9. Բուսաբուծության տարբեր ոլորտներում ներգրավված տնային տնտեսությունների մասնաբաժինը**



Հարցման տվյալներով, տնամերձ հողատարածքների 78%-ն ամբողջությամբ ոռոգվում են, 4%-ը մասամբ են ոռոգվում, իսկ 18%-ը չեն ոռոգվում: Միաժամանակ, միջինում, ոռոգվող է հարցված տնային տնտեսությունների կողմից օգտագործվող վարելահողի ընդամենը 45%-ը:

## Պատկեր 10. Ռոտզվող վարելահող



Նկատելի է, որ այն համայնքներում, որտեղ կան գործող կոոպերատիվներ, կոոպերատիվի անդամների մոտ 60%-ի վարելահողը գոնե մասամբ ռոտզվող է, մինչդեռ կոոպերատիվի չանդամակցող ֆերմերների մեծամասնության (53%) վարելահողը չի ռոտզվում: Այդուհանդերձ, դժվար է ասել, արդյո՞ք կոոպերատիվին անդամակցելն է հնարավորություն ստեղծել ավելացնել ռոտզվող հողատարածքի մասնաբաժինը, թե՛ կոոպերատիվին անդամակցելու ավելի մեծ հակվածություն ունեն այն ֆերմերները, ովքեր արդեն իսկ որոշ չափով լուծել են ռոտզման խնդիրը:

Ըստ հարցման արդյունքների, գյուղատնտեսական աշխատանքներում ներգրավված է միջինում 3.6 աշխատող, որոնց մեկ երրորդը՝ լրիվ դրույքով, իսկ երկու երրորդը՝ կես դրույքով: Հատկանշական է, որ կոոպերատիվի անդամների դեպքում գյուղատնտեսական աշխատանքներում ներգրավված է միջինում 5 աշխատող, մինչդեռ կոոպերատիվի անդամ չհանդիսացող ֆերմերների դեպքում՝ ընդամենը 3:

Հարցված տնային տնտեսությունների շրջանառությունը գյուղատնտեսական արտադրության գծով (անասնաբուծությունը ներառյալ) 2015թ.-ին միջինում կազմել է 945,000 ՀՀ դրամ: Հատկանշական է, որ կոոպերատիվների անդամակցող ֆերմերների միջին տարեկան շրջանառությունը գրեթե երկու անգամ գերազանցել է կոոպերատիվների չանդամակցող ֆերմերներինը՝ կազմելով 1,370,000 ՀՀ դրամ (տե՛ս Աղյուսակ 3):

**Աղյուսակ 3. Շրջանառությունը գյուղատնտեսական արտադրության գծով (2015թ.)**

Շրջանառություն (ՀՀ դրամ)	Կոոպերատիվի անդամներ	Կոոպերատիվի չանդամակցող ֆերմերներ	Գյուղում կոոպերատիվ չկա	Բոլոր հարցվողները
Մինչև 100,000	9%	21%	23%	18%
101,000-500,000	33%	34%	41%	36%
501,000-1,000,000	20%	24%	18%	21%
1,000,001-2,000,000	19%	14%	12%	15%
2,000,000+	18%	6%	6%	10%
<b>Ընդամենը</b>	<b>100%</b>	<b>100%</b>	<b>100%</b>	<b>100%</b>
<b>Միջին</b>	<b>1,370,000</b>	<b>770,000</b>	<b>700,000</b>	<b>945,000</b>


Հիմնական բուսաբուծական արտադրանքը միջինում կազմել է հարցված տնային տնտեսությունների տարեկան շրջանառության 66%-ը, կամ 624,000 ՀՀ դրամ, ընդ որում հիմնական արտադրանքի մասնաբաժինը հարցվողների երեք խմբերից յուրաքանչյուրում գրեթե նույնական էր (տե՛ս Աղյուսակ 4):

**Աղյուսակ 4. Շրջանառությունը հիմնական բուսաբուծական արտադրանքի գծով (2015թ.)**

Խումբ	Հիմնական բուսաբուծական արտադրանքի գծով շրջանառությունը	Մասնաբաժինը ընդհանուր շրջանառության մեջ
Կոոպերատիվի անդամներ	877,000	64%
Կոոպերատիվի չանդամակցող ֆերմերներ	524,000	68%
Գյուղում կոոպերատիվ չկա	469,000	67%
<b>Բոլոր հարցվողները</b>	<b>624,000</b>	<b>66%</b>

Պատկեր 11-ն ամփոփում է հիմնական բուսաբուծական ոլորտների գծով միջին տարեկան շրջանառության վերաբերյալ տվյալները:

## Պատկեր 11. Շրջանառությունը՝ ըստ հիմնական բուսաբուծական ոլորտների (2015թ.)




### Հիմնական սպառման շուկա և գնորդների հետ հարաբերություններ

Ըստ հարցման տվյալների, տնային տնտեսությունների մեծամասնության (57%) բուսաբուծական արտադրանքի վաճառքի հիմնական շուկան միջնորդներն են, իսկ յուրաքանչյուր հինգերորդ տնային տնտեսության դեպքում (18%)՝ վերամշակող գործարանները:

Հատկանշական է, որ կոոպերատիվի անդամների շրջանում արտադրանքը հիմնականում վերամշակող գործարաններին վաճառող ֆերմերների մասնաբաժինը երկու անգամ գերազանցում է կոոպերատիվի չանդամակցող ֆերմերներինը (տե՛ս Պատկեր 12):

Վաճառքի այլ հիմնական շուկաներից առավել տարածված է մանրածախ վաճառքը անհատ սպառողներին (հարևաններ, բարեկամներ, վաճառք մայրուղիներում, և այլն) և գյուղատնտեսական շուկաներում:

## Պատկեր 12. Հիմնական վաճառքի շուկա




Հարցվողների երկու երրորդից ավելին (71%) նշել են, որ հիմնական գնորդը գալիս և գնում է արտադրանքը տնային տնտեսության տարածքից, մինչդեռ 29%-ը արտադրանքն առաքում է գնորդին: Այս բաշխումը գրեթե նույնական էր կոոպերատիվի անդամների և կոոպերատիվի չանդամակցող ֆերմերների դեպքում:

Դեպքերի ճնշող մեծամասնությունում (83%) հիմնական գնորդը ապրանքի դիմաց վճարում է առաքման պահին, իսկ 16%-ում (հիմնականում վերամշակող գործարաններ)՝ առաքումից միջինում 49, բայց մեծամասամբ ոչ ավել քան 30 օր հետո: Առաքումից առաջ (կանխավճարի կամ փոխառության տեսքով) վճարումը շատ հազվադեպ է հանդիպում (1%):

Ըստ հարցման արդյունքների, 2015թ.-ին հարցվողների հիմնական բուսաբուծական արտադրանքի՝ միջինում 56%-ը վաճառվել է միջնորդներին, 18%-ը վերամշակող գործարաններին, 6%-ը գյուղատնտեսական շուկաներում և 20%-ը այլ եղանակներով:



**Պատկեր 13. Հիմնական արտադրանքի իրացումը (2015թ.)**




Հարցվողները միջինում գործ են ունեցել մեկ վերամշակող գործարանի, երեք միջնորդների և մեկ գյուղատնտեսական շուկայի հետ (միջինը հաշվարկված է տվյալ գնորդի հետ հարաբերություններ ունեցած հարցվողների համար): Գնորդների միջին քանակի առումով կոոպերատիվի անդամների և կոոպերատիվի չանդամակցող ֆերմերների միջև տարբերություն չի նկատվել:

Հարցվողների գնահատականներով, իրենց հիմնական բուսաբուծական արտադրանքը իրատեսականորեն ունի միջինում 3 պոտենցիալ (մեծածախ) գնորդ, ընդ որում 4 կամ ավելի պոտենցիալ գնորդ ունեցողները կազմել են հարցվողների ընդամենը 27%-ը:

Հարցվողների երկու երրորդը բավարարված կամ շատ բավարված է հիմնական գնորդի հետ հարաբերություններով (58% և 9% համապատասխանաբար): Միաժամանակ, միջնորդների հետ հարաբերություններով բավարարված կամ շատ բավարարված է հարցվողների 74%-ը, իսկ վերամշակող գործարանների հետ հարաբերություններով՝ 59%-ը (տե՛ս Պատկեր 14):


**Պատկեր 14. Բավարարվածությունը միջնորդների և վերամշակող գործարանների հետ հարաբերություններով**



Հարցվողներին խնդրել էինք գնահատել տարբեր գործոնների կարևորությունը՝ հիմնական գնորդի ընտրության հարցում: Գնահատման համար օգտագործվել է հինգ բալանոց սանդղակ, որտեղ 1 = բացարձակ կարևոր չէ, 2 = որոշ չափով կարևոր է, 3 = բավականին կարևոր է, 4 = շատ կարևոր է, իսկ 5 = ամենակարևոր գործոնն է:

Ըստ հարցման արդյունքների գնորդի ընտրության հարցում չորս առավել կարևոր գործոններն են գնորդի ընդհանուր առմամբ վստահելի լինելը, գնորդի վստահելիությունը վճարումները պայմանավորված ժամանակին և ամբողջությամբ կատարելու առումով, գների կայունությունը և գնորդի կողմից առաջարկվող ավելի բարձր գները: Պատկեր 15-ում գործոնները ներկայացված են կարևորության նվազման կարգով՝ ըստ կարևորության միջին գնահատականների:


### Պատկեր 15. Հիմնական գնորդի ընտրության վրա ազդող գործոնները



Հարցման մասնակիցներին խնդրել էինք գնահատել, թե որքանով հեշտ է փոխել իրենց արտադրանքի հիմնական գնորդին և թե որքանով է, ըստ հարցվողների, հիմնական գնորդի համար հեշտ փոխարինել իրենց՝ մեկ այլ մատակարարով:


Ուշագրավ է, որ առաջին հարցին հարցվողների 39%-ը պատասխանել է դժվար կամ շատ դժվար, ևս 39%-ը՝ հեշտ կամ շատ հեշտ, իսկ 23%-ը՝ ոչ հեշտ, ոչ դժվար: Այդուհանդերձ, պարզվեց, որ կոոպերատիվի անդամ հանդիսացող ֆերմերներին հարաբերականորեն ավելի դժվար է փոխարինել իրենց հիմնական գնորդին, քան կոոպերատիվի չանդամակցող ֆերմերներին (տե՛ս Պատկեր 16):

### Պատկեր 16. Արտադրանքի հիմնական գնորդին փոխելու դյուրինությունը



Նման արդյունքը թերևս սպասելի էր, հաշվի առնելով, որ կոոպերատիվի անդամների շրջանում մեծամասամբ վերամշակող գործարաններին իրենց արտադրանքը վաճառող ֆերմերների տոկոսը զգալիորեն բարձր է կոոպերատիվի չանդամակցող ֆերմերների համեմատ, իսկ վերամշակող գործարանների թիվը անհամեմատ փոքր է՝ գնորդների այլ կատեգորիաների (մասնավորապես՝ անհատ միջնորդների) համեմատ: Տվյալների համեմատությունը հաստատեց, որ այն ֆերմերների համար, ում հիմնական գնորդը վերամշակող գործարան է, անհամեմատ ավելի բարդ է փոխել հիմնական գնորդին, քան նրանց համար, ում հիմնական գնորդը անհատ միջնորդներն են (տե՛ս Պատկեր 17):

**Պատկեր 17. Արտադրանքի հիմնական գնորդին փոխելու դյուրինությունը վերամշակող գործարանների և անհատ միջնորդների դեպքում**




Միաժամանակ, թե՛ կոոպերատիվի անդամների և թե՛ կոոպերատիվի չանդամակցող ֆերմերների հարցվողների մեծամասնությունը կարծում է, որ հիմնական գնորդի համար հեշտ կամ շատ հեշտ է փոխարինել իրենց՝ այլ մատակարարով (տե՛ս Պատկեր 18):

Նկատելի է, որ կոոպերատիվի չանդամակցող ֆերմերների շրջանում այս կարծիքը փոքր ինչ ավելի տարածված է, քան կոոպերատիվի անդամների շրջանում: Այդուհանդերձ, տվյալների համադրությամբ պարզվեց, որ այս տարբերությունը հիմնական գնորդով պայմանավորված չէ: Հակառակը, ըստ հարցվողների, վերամշակող գործարանների համար ավելի հեշտ է մատակարար փոխելը, քան անհատ միջնորդների համար, ուստի կոոպերատիվի անդամները պետք է որ ավելի վատատես լինեին:

Թեև հարցման տվյալներով այս հակասությունը բացատրել հնարավոր չէղավ, պատճառը գուցե այն է, որ վերամշակող գործարանները գնորդ-մատակարար հարաբերություններում կոոպերատիվը դիտարկում են որպես միասնական մատակարար և կոոպերատիվի

առանձին անդամների հետ հարաբերություններում առավել զգուշավոր են: Այնուամենայնիվ, կոոպերատիվները գյուղ. մթերքի շուկայում դեռևս այնպիսի կշիռ չունեն, որպեսզի կարողանան ազդել հիմնական գնորդների որոշումների վրա:

**Պատկեր 18. Հիմնական գնորդի համար մատակարարին փոխարինելու դյուրինությունը**




### Եկամտի և գյուղատնտեսական գործունեության կայուն զարգացման վրա ազդող գործոնները

Հարցվողներին առաջարկել էինք տնային տնտեսության եկամտի և գյուղատնտեսական գործունեության կայուն զարգացման վրա հնարավոր ազդեցություն ունեցող գործոնների շարք և խնդրել էինք գնահատել յուրաքանչյուր գործոնի ազդեցությունը՝ մեկից հինգ բալանոց սանդղակով, որտեղ 1 = ոչ մի ազդեցություն, իսկ 5 = շատ ուժեղ ազդեցություն:

Ըստ հարցման տվյալների, ամենաուժեղ բացասական ազդեցությունն ունեցող գործոններն են բնական աղետները, ենթակառուցվածքների (ճանապարհներ, ոռոգում) հասանելիության ցածր մակարդակը, շուկայի և գների անկայունությունը և սարքավորումների ու մեքենաների հասանելիության ցածր մակարդակը: Պատկեր 19-ը ներկայացնում է բոլոր քննարկված գործոնները՝ նվազման կարգով, ազդեցության միջին գնահատականների հիման վրա: Կարևոր է նշել նաև, որ միջին գնահատականները հարցվողների բոլոր երեք խմբերում նույնական էին:

**Պատկեր 19. Եկամտի և գյուղատնտեսական գործունեության կայուն զարգացման վրա ազդող գործոնները՝ ըստ ազդեցության ուժգնության**



**Կոոպերացիա**

Գյուղատնտեսական կոոպերացիայի վերաբերյալ հարցվողների պատկերացումները ստանալու նպատակով մշակվել է հարցերի երկու առանձին խումբ՝ ուղղված կոոպերատիվի անդամներին և կոոպերատիվի չանդամակցող ֆերմերներին: Ստորև ներկայացնում ենք հարցման արդյունքները՝ երկու ենթաբաժիններով:

**Կոոպերատիվի անդամներ**

Հարցման մասնակիցների 28%-ը կոոպերատիվի անդամ է դարձել 1-2 տարի առաջ, 29%-ը՝ 3-4 տարի առաջ, 44%-ը՝ 5 և ավելի տարի առաջ:

Ինչպես նշվել է հաշվետվության ներածական բաժնում, հարցման ընտրանքը ներառել է 10 կոոպերատիվների՝ ընդհանուր թվով 100 անդամների: Կոոպերատիվի անդամներին ուղղված հարցաթերթը պարունակում էր մի քանի հարց՝ կոոպերատիվի փաստացի կարգավիճակի և գործունեության մասին: Հարցվողների պատասխանները ստուգելու և

հնարավորինս ճշգրիտ տվյալներ արձանագրելու նպատակով, այս հարցերը տրվել են նաև յուրաքանչյուր կոոպերատիվի վարչության նախագահին:

Այսպիսով, ըստ հարցման արդյունքների, ընտրանքում ներգրավված 10 կոոպերատիվները միջինում ունեն 67 անդամ, նվազագույնը՝ 22, առավելագույնը՝ 136:

Բոլոր 10 կոոպերատիվները սպառողական կոոպերատիվներ են:

Կոոպերատիվի կողմից ամենահաճախը համակարգվում են արտադրությանը (10 կոոպերատիվ),<sup>1</sup> հումքի ձեռքբերմանը (7 կոոպերատիվ), լոբբինգին (7 կոոպերատիվ) և մարքեթինգին (6) առնչվող հարցերը: Անդամների վերապատրաստում իրականացնում է կոոպերատիվներից հինգը: Տրանսպորտի հարցերով զբաղվում է չորս, իսկ պահեստավորման հարցերով՝ երեք կոոպերատիվ: Վերամշակման, փաթեթավորման և ֆինանսավորման հարցեր համակարգում է ընդամենը մեկական կոոպերատիվ:

Մոտ ապագայում ևս երկու կոոպերատիվ պլանավորում է զբաղվել վերամշակմամբ և մարքեթինգով, իսկ մեկական կոոպերատիվ պլանավորում է համակարգել հումքի ձեռքբերման, պահեստավորման և փաթեթավորման հարցերը:

Ընտրանքում ընդգրկված կոոպերատիվների կեսը ֆինանսական կամ ոչ ֆինանսական աջակցություն է ստացել թե՛ պետությունից և թե՛ դոնորներից, իսկ մյուս կեսը՝ միայն դոնորներից:

Պետական աջակցությունը հիմնականում եղել է կոոպերատիվի գրասենյակի տրամադրման կամ գյուղատնտեսական տեխնիկայի ձեռքբերման համաֆինանսավորման տեսքով (Գյուղատնտեսական ծրագրերի իրականացման գրասենյակի կամ գյուղապետարանի բյուջեից):

Դոնորները (Oxfam, UMCOR, Շեն, World Bank, Heifer, Card, Հայ ավետարանչական եկեղեցի, Զինիշյան հիմնադրամ) ֆինանսավորել կամ համաֆինանսավորել են գյուղատնտեսական տեխնիկայի, ջերմոցների, սառնարանային տնտեսությունների ձեռքբերումը/կառուցումը, ինչպես նաև իրականացրել տարաբնույթ վերապատրաստման դասընթացներ (իրավական, գյուղատնտեսական, կոոպերատիվի կառավարման, և այլ հարցերի շուրջ):


Կոոպերատիվների անդամներին հարցրել էին, արդյո՞ք մասնակցում են կոոպերատիվի որոշումներ կայացնելու գործընթացին և թե որքանո՞վ են վստահում կոոպերատիվի վարչության կայացրած որոշումներին:

---

<sup>1</sup> Արտադրության խթանման գործառույթներում ներառված են նաև գյուղսպասարկման տարատեսակ ծառայությունները, որոնք կոոպերատիվները մատուցում են իրենց անդամներին:


Ըստ հարցման տվյալների, կոոպերատիվի անդամակցող ֆերմերների ճնշող մեծամասնությունը (88%) այս կամ այն չափով ներգրավված է որոշումների կայացման գործընթացում:

**Պատկեր 20. Մասնակցությունը կոոպերատիվի որոշումների կայացմանը**



Կոոպերատիվի վարչության կայացրած որոշումներին չեն վստահում հարցվածների ընդամենը 4%-ը:

**Պատկեր 21. Կոոպերատիվի վարչության կայացրած որոշումների վստահելիությունը**



Հարցվողներին այնուհետև խնդրել էինք նշել, թե ինչ փոփոխություններ են տեղի ունեցել իրենց գործունեության մեջ կոոպերատիվի անդամ դառնալուց հետո:



Հարցման արդյունքներով, կոոպերատիվին անդամակցելը ամենազգալի դրական ազդեցությունն է ունեցել ֆերմերների միջև հաղորդակցության և փոխադարձ աջակցության արդյունավետության բարձրացման, ինչպես նաև ֆերմերների գիտելիքների ու հմտությունների բարելավման առումներով: Զգալի չափով բարելավվել է նաև գյուղատնտեսական տեխնիկայի հասանելիությունը, բարձրացել է ֆերմերների արտադրանքի որակը, նվազել է արտադրության ծախսը և աճել է տնային տնտեսությունների եկամուտը:

Կոոպերատիվի անդամակցելը ամենաքիչ ազդեցությունն է ունեցել բնական աղետներից պաշտպանվածության մակարդակի բարձրացման և շուկայական դիսկերի նվազեցման վրա (տե՛ս Աղյուսակ 5):


**Աղյուսակ 5. Կոոպերատիվի անդամ դառնալուց հետո տեղի ունեցած փոփոխությունները**

Փոփոխություն	Բոլորովին	Չնչին չափով	Որոշ չափով	Զգալի չափով	Շատ զգալի չափով	Միջին գնահատական
Խմբի/կոոպերատիվի ներսում հաղորդակցումը և փոխադարձ աջակցությունը դարձել են ավելի արդյունավետ	8%	7%	22%	53%	10%	3.5
Գիտելիքներն ու հմտություններն բարելավվել են	10%	8%	27%	46%	9%	3.4
Գյուղատնտեսական տեխնիկայի և սարքավորումների հասանելիությունը բարելավվել է	20%	14%	27%	35%	4%	2.9
Արտադրանքի որակը բարելավվել է	23%	7%	42%	26%	2%	2.8
Արտադրության ծախսը նվազել և ավելի արդյունավետ է դարձել	24%	12%	40%	21%	3%	2.7
Տնային տնտեսության եկամուտը աճել է	29%	10%	40%	19%	2%	2.6
Արտադրանքի ծավալն աճել է	29%	8%	43%	20%	0%	2.5

Ֆինանսավորման և վարկ վերցնելու հասանելիությունը բարելավվել է	44%	8%	17%	24%	7%	<b>2.4</b>
Հետերքահավաքային և վերամշակման ենթակառուցվածքների հասանելիությունը բարելավվել է	44%	13%	23%	20%	0%	<b>2.2</b>
Շուկայական դիսկերի ազդեցությունը նվազել է (շուկայի և գների անկայունություն)	52%	18%	23%	7%	0%	<b>1.9</b>
Բնական աղետներից պաշտպանվածությունը մեծացել է (ցրտահարում, երաշտ, կարկուտ, և այլն)	63%	10%	10%	16%	1%	<b>1.8</b>


Կոոպերատիվի անդամակցելու ամենատարածված դրդապատճառներն էին ենթակառուցվածքների հասանելիությունը (մեքենասարքավորումներ, պահեստավորում, և այլն) և գյուղատնտեսական արտադրության ավելի լավ կազմակերպումը:

**Պատկեր 22. Կոոպերատիվի միանալու դրդապատճառները**




Հարցվողների մեծամասնության (60%) կարծիքով իրենց կոոպերատիվի անդամների քանակը մոտ ապագայում որոշ չափով կաճի:

**Պատկեր 23. Կոոպերատիվի անդամների քանակի կանխատեսվող փոփոխությունը**



Ինչ վերաբերում է գյուղացիների միջև կոոպերացիայի հիմնական ռիսկերին, ապա ամենատարածված պատասխանը կոոպերատիվներին աջակցող պետական քաղաքականությունների պակասն էր (41%):

## Պատկեր 24. Գյուղացիների միջև կոոպերացիայի հիմնական ռիսկերը




### Կոոպերատիվի չանդամակցող ֆերմերներ

Կոոպերատիվի չանդամակցող ֆերմերների մեծամասնությունը (66%) մի քանի այլ գյուղատնտեսական արտադրողների հետ համախմբվելով արտադրության, մարքեթինգի կամ այլ խնդիր լուծելու փորձ ունի: Ընդ որում, նման փորձ ունեցողների մասնաբաժինը նույնն է կոոպերատիվ ունեցող և կոոպերատիվ չունեցող համայնքներում:

Համագործակցության փորձ ունեցող ֆերմերների մեծամասնությունը (57%) տարբեր հարցերի շուրջ այլ ֆերմերների հետ համագործակցում է տարեկան մի քանի անգամ, 36%-ը՝ տարեկան մեկ անգամ կամ ավելի հազվադեպ, իսկ 7%-ը՝ մշտապես:

Համագործակցությունն առավել հաճախ եղել է տրանսպորտի, արտադրության և հումքի/սյուլթերի ձեռքբերման շուրջ:

## Պատկեր 25. Այլ գյուղացիների հետ համագործակցության ոլորտները




Կոոպերատիվի չանդամակցող ֆերմերների 18%-ը բարձր կամ շատ բարձր է գնահատել կոոպերատիվ ստեղծելու իր ցանկությունը, ընդ որում նման ցանկություն է հայտնել կոոպերատիվ ունեցող համայնքներում հարցվածների 19%-ը և կոոպերատիվ չունեցող համայնքներում հարցվածների 16%-ը:

Կոոպերատիվի անդամակցելու բարձր կամ շատ բարձր ցանկություն ունի հարցվողների 32%-ը, ընդ որում՝ կոոպերատիվ ունեցող համայնքներում հարցվածների 30%-ը և կոոպերատիվ չունեցող համայնքներում հարցվածների 35%-ը:

Հարցվողների 50%-ը նշել է, որ իրենց գյուղում կա մեկը, ում կվստահեին կոոպերատիվ առաջնորդելու հարցում, ընդ որում նման կարծիք է հայտնել կոոպերատիվ ունեցող համայնքներում հարցվածների 60%-ը, իսկ կոոպերատիվ չունեցող համայնքներում հարցվածների 40%-ը:


Ինչպես կոոպերատիվի ներկայիս անդամների, այնպես էլ պոտենցիալ անդամների դեպքում կոոպերատիվի անդամակցելու (կամ կոոպերատիվ հիմնելու) դրդապատճառներից ամենատարածվածը ենթակառուցվածքների հասանելիությունն ու գյուղատնտեսական արտադրության ավելի լավ կազմակերպումն են:

**Պատկեր 26. Կոոպերատիվ հիմնելու կամ կոոպերատիվի անդամակցելու դրդապատճառները**



Գյուղացիների միջև կոոպերացիայի հիմնական ռիսկերը, ըստ կոոպերատիվի չանդամակցող ֆերմերների, կոոպերատիվներին աջակցող պետական քաղաքականությունների պակասն է (30%), գյուղում կոոպերատիվ կառավարելու հմտությունների պակասը (29%) և գյուղատնտեսական արտադրողների միջև փոխադարձ վստահության պակասը (28%) (տե՛ս Պատկեր 27): Ուշագրավ է, որ կոոպերատիվի անդամների կողմից նշված ռիսկերից վերջին երկուսը շատ ավելի ցածր էին գնահատվել:

**Պատկեր 27. Գյուղատնտեսական կոոպերացիայի հիմնական ռիսկերը՝ ըստ կոոպերատիվի չանդամակցող ֆերմերների**



**ԲԱԺԻՆ 3. ՖՈԿՈՒՍ ԽՄԲԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

**Գյուղատնտեսական կոոպերատիվների և կոոպերացիայի մասին ընկալումները**

Կոոպերացիայի մասին ֆերմերների պատկերացումները պարզելու համար, նախևառաջ, խնդրեցինք, ֆոկուս խմբերի մասնակիցներին նկարագրել, թե ինչ է կոոպերատիվը: Կոոպերատիվի մասին ֆոկուս խմբերի մասնակիցների տեղեկացվածության մակարդակը և

ընկալումները տարբեր են: Ստացված պատասխանների հիման վրա՝ կոոպերատիվների և կոոպերացիայի մասին ընկալումները պայմանականորեն բաժանել ենք 3 խմբի՝

1. Կոոպերատիվի անդամներին օգնություն տրամադրող կառույց
2. Մարդկանց համախմբող կառույց, որը հնարավորություն է տալիս համատեղ ջանքերով հասնել մեկ միասնական նպատակի
3. Կառույց, որը հիշեցնում է սովետական կոլխոզն ու սովխոզը

Հարցված համայնքներում կոոպերատիվների նախագահների և անդամների մեծ մասը նշել է, որ կոոպերատիվը «գյուղացու հոգսը թեթևացնող» միջնորդ է, որը պետությունից, միջազգային և տեղական կազմակերպություններից ստանում է աջակցություն՝ իր անդամներին մատչելի ծառայություններ մատուցելու նպատակով: Հատկանշական է, որ այդ աջակցությունն ակնկալում են բացառապես արտաքին աղբյուրներից՝ անտեսելով իրենց իսկ միջոցներով նման կառույցի հիմնման հնարավորությունը: Ըստ պատկերացումների *առաջին խմբի՝* կոոպերատիվի գործառույթն է օգնել իր անդամներին իրականացնել գյուղատնտեսական գործունեության ողջ շրջանը՝ «ապահովել տեխնիկայով», «որակյալ, բայց մատչելի բուժանյութ, պարարտանյութ տրամադրել», «իրացման շուկայի հարցը լուծել»: Կոոպերատիվն ըստ այս ընկալման պետք է նաև համայնքի խնդիրներին արձագանքի՝

«ջրի հարցը պիտի կարողանա լուծի», «ցրտահարության դեմ միջոցներ ձեռնարկի»:

Այս պատկերացումները գերակշռում են համեմատաբար շատ անդամներ ունեցող կոոպերատիվներում: Հարցված կոոպերատիվների մեծ մասի անդամները չեն գերազանցում 100-ը: Բացառություն է Թթուջուր համայնքի կոոպերատիվը, որտեղ համայնքի ճնշող մեծամասնությունը՝ 200 բնակիչ, կոոպերատիվի անդամ է: Այսպես, 60 անդամ ունի Հացիկ համայնքի կոոպերատիվը, 75՝ Շաքին և 82՝ Նոր Կյանքը:

Այս կոոպերատիվները պետական կառույցներից և համայնքների զարգացմամբ զբաղվող կազմակերպություններից ստացել են գյուղատնտեսական տեխնիկա: Կոոպերատիվի անդամների պատասխաններից կարելի է եզրակացնել, որ կոոպերատիվի աշխատանքները գնահատելիս հաշվի է առնվում միայն կոոպերատիվի՝ անդամներին տեխնիկայով, վառելիքով, սերմերով և պարարտանյութով ապահովելու գործառույթը: Կոոպերատիվի անդամները կոոպերատիվի գյուղատնտեսական տեխնիկայից օգտվում են շուկայականից մատչելի գնով.

«Օրինակ՝ սովորականը անում են 7000 դրամով, կոոպերատիվի անդամինը՝ 5000-ով: Մի 20% էժան է»: (Շաքի և Նոր կյանք, կոոպերատիվի անդամներ)

Կոոպերատիվները մասամբ են կարողանում իրականացնել իրենց գործառույթները: Քիչ թե շատ իրականացվում է գյուղատնտեսական մեքենայացված աշխատանքներով սպասարկումը, ներդրանքի մատակարարումը և փոխառության միջոցների տրամադրումը:



Հարցված կոոպերատիվներից և ոչ մեկը դեռ չի իրականացնում գյուղմթերքի հավաքում, մշակում, իրացում կամ լիզինգային ծառայությունների մատուցում: Օրինակ՝ Նոր կյանքի, Հացիկի կոոպերատիվները հիմնադրամներից վարկերի ստացման փորձ ունեն:

««Զինիշյան» հիմնադրամի վարկերից օգտվում են 42 անդամներ»: (Նոր կյանք, կոոպերատիվի անդամներ)

«Կոոպերատիվին ցածր տոկոսով վարկ էր տալիս «Քարդ»-ը»: (Հացիկ, կոոպերատիվի անդամներ)

Պետական կառույցներից ներդրանքի աջակցություն ստացել է Թթուջուրը, իսկ Նոր կյանքը՝ փոխառությամբ սերմերի ստացման փորձ ունի:

«Գյուղնախարարությունից սուբսիդավորվել է վառելիքը, սերմերը, պարարտանյութը»: (Թթուջուր, կոոպերատիվի անդամներ)

«Ռուսաստանից 1000 տոննա սերմ բերեցին, մեր կոոպերատիվին 4 տոննա հատկացրեցին և հաջորդ տարի մենք ութ տոննա հետ տվեցինք: Շնորհքով բաժանեցինք անդամների մեջ, ու բոլորս էլ ճիշտ ժամանակին վերադարձրեցինք: Նախարարությունն էլ մեզ շնորհակալություն հայտնեց: Իրենց պահանջով՝ զտած, աղբը հանած, մեշոկների մեջ կարած, ոնց որ մենք իրենցից ստացել էինք»: (Նոր կյանք, կոոպերատիվի անդամներ)

Ըստ կոոպերատիվների մասին պատկերացումների երկրորդ խմբի՝ կոոպերատիվը նախևառաջ մարդկանց համախմբումն է և միասին աշխատելու ցանկությունն է, ինչպես նաև շահույթի հավասար բաշխումն է անդամների միջև և գյուղատնտեսական ռիսկերին միասնաբար դիմակայելու պատրաստակամությունը:

«Կոնկրետ ես կասեմ՝ համախմբվածություն: Մարդկանց միակամություն, միասնություն, միասին աշխատելու հնարավորություն, համերաշխություն: Բացի դա՝ մեկս մյուսին գնահատելու, լավ ճանաչելու, իմանալու, թե ով ինչի է ի վիճակի, ով ինչ է կարող անել...»

Ինչպես նաև ռիսկերի և շահույթների միասին բաշխում: Գյուղատնտեսության մեջ ռիսկերը մեծ են, և միայնակ գնալ էդ ռիսկերին մի քիչ դժվար է, բայց համախմբված՝ կարողանում ես և՛ ռիսկերին դիմանալ, և՛ շահույթն ես կարողանում ճիշտ բաժանել»: (Գոմք, կանանց կոոպերատիվի անդամներ)

Այս պատկերացումների կրողներն են համեմատաբար փոքր կոոպերատիվների ու ոչ ֆորմալ խմբերի անդամները: Օրինակ՝ Գոմքի կոոպերատիվն ունի 27 անդամ, իսկ Աշտավանի ազնվամորի արտադրողների ոչ ֆորմալ խումբը 9 հոգուց է բաղկացած: Գոմք համայնքի կանանց կոոպերատիվը ստեղծվել է «Օքսֆամ» կազմակերպության կողմից, որի

միջոցով էլ համայնքում ջերմոց է կառուցվել: Կոոպերատիվի անդամներին ոգևորում էր այն հանգամանքը, որ կոոպերատիվն իր շահույթի մի մասը հատկացնում է համայնքում առկա խնդիրների լուծմանը: Ֆոկուս խմբի մասնակիցները կոոպերատիվի սոցիալական դերակատարումը շատ են կարևորել.

«Շահույթի 40%-ը պիտի սոցիալական ծրագիր անեինք: Առաջին տարին մտածեցինք ու մանկապարտեզին հեռուստացույց-DVD նվիրեցինք, որ երեխաները պարեհներգեին: Երկրորդ տարին աշակերտներին գրքեր ենք առել: Երրորդ տարին, տեսանք, որ անապահով ընտանիքներ կան, որոշեցինք, որ ջերմոցում աշխատեն, մի չորս բաժին տանեն, էն որ ասում են՝ բալքի վիճակները լավանա»: *(Գոմք, կանանց կոոպերատիվի անդամներ)*

Ընդհանուր առմամբ, կանանց կոոպերատիվները, ինչպես նաև ոչ ֆորմալ խմբերը համայնքներում փոխում են նաև կնոջ դերի մասին պատկերացումները: Օրինակ՝ Գոմք և Աշոտավան համայնքներում տղամարդիկ սկզբում թերահավատորեն են մոտեցել կանանց կոոպերացիային, սակայն այդ դիրքորոշումը փոխվել է, երբ համագործակցություն իր առաջին արդյունքներն է տվել: Հարկ է նշել, որ 2 համայնքում էլ կանանց խմբերի հետ մեծ աշխատանք է տարվել տարբեր միջազգային և տեղական կազմակերպությունների կողմից:

«Մեր հանդեպ վստահությունը բարձրացավ, երբ կարողացանք եկամուտ ստանալ վաճառված մալինայից [ազնվամորի<sup>2</sup>]:» *(Աշոտավան, կանանց ոչ ֆորմալ կոոպերացիա)*

«Քանի որ սա կանանց կոոպերատիվ է, կնոջ դերը համայնքում բարձրացավ: Սա շատ կարևոր բան արեց համայնքում: Սկզբից դժվար էին տանում տղամարդիկ՝ «այ մարդ, էս կնիկները էլի հավաքվան իրար գլխի»: Կամաց-կամաց մի բան փոխվեց, սկսեցին մեզ գնահատել տղամարդիկ»: *(Գոմք, կանանց կոոպերատիվի անդամներ)*

Միևնույն ժամանակ այն երիտասարդ կանայք, ովքեր կոոպերացիայի ոչ մի փորձ չունեին և տնային տնտեսուհու կարգավիճակում էին, ընդհանրապես տեղյակ չէին, թե ինչ է կոոպերատիվը և չէին պատկերացնում, թե ինչ գործառույթներ այն կարող է ունենալ:

Կոոպերատիվը սովետական կոլխոզի և սովխոզի հետ նույնականացնողները հիմնականում կոոպերատիվի նախկին անդամներն են, նորաստեղծ կոոպերատիվի անդամներն են և որևէ կոոպերացիայի անդամ չհանդիսացող անձինք: Նկատելի էր, որ այս պատասխանը տվել են միջին և միջինից բարձր տարիքով մարդիկ: Օրինակ՝ Շաքի համայնքում գյուղապետը նշում է, որ կոոպերատիվի անդամները ամբողջությամբ չեն հասկանում, թե ինչ է կոոպերատիվը, որովհետև չեն կարդում կոոպերատիվի կանոնադրությունը և հավաքներին չեն գալիս.

---

<sup>2</sup> Զեդինակի թարգմանություն

«Կոոպերատիվը պետք է սկզբունքորեն աշխատի, հիմնարար սկզբունքները պետք է կատարվի: Անդամները դեռ լավ չեն էլ պատկերացնում, թե ինչ բան է կոոպերատիվը, որովհետև ժողովներին սկի նորմալ չեն էլ մասնակցում: Ոնց-որ իրանք թյուր կարծիք ունեն կոոպերատիվի մասին, իրանց թվում է՝ նախկին կոլտնտեսական միություն պիտի ստեղծվի, թե ի՞նչ»: (Շաքի, գյուղապետ)

«Ինչ է կոոպերատիվը» հարցը հնչեցվել է նաև այն համայնքներում, որտեղ չկան կոոպերատիվներ կամ ոչ ֆորմալ գործող խմբեր: Պատասխան չստանալու դեպքում, հարցը վերաձևակերպվել է հետևյալ կերպ՝ «նկարագրեք ձեր պատկերացումները կոոպերատիվի մասին»:

«Ես պատկերացնում եմ էսպես՝ հին կոլխոզի սիստեմ լինի, միատեղ լինի, միրգ են աճեցնում, բանջարեղեն, թե հացահատիկ, հիսուն մարդ է, հարյուր մարդ է՝ մի տեղ աշխատեն»: (Բերդավան, կոոպերատիվի նախկին անդամներ)

Գրանցվել է նաև կոոպերատիվների և կոոպերացիայի մասին տեղեկացվածության գրեթե զրոյական մակարդակ: Հիմնականում կոոպերատիվը դժվարացել են նկարագրել կոոպերատիվների անդամ չհանդիսացող երիտասարդ անձինք:

«Ընդհանրապես տեղյակ չենք կոոպերատիվից, մենակ գիտենք, որ կոլեկտիվ աշխատում են»: (Պտղավան, կոոպերատիվին չանդամակցող կանայք)

Կոոպերատիվն իբրև անդամներին օգնություն տրամադրող կառույց տեսնողները և այն կոլխոզի/սովխոզի հետ նույնացնողները թերևս ամբողջական պատկերացում չունեն, թե ինչ է իրենից ներկայացնում կոոպերատիվը: Կոոպերատիվը՝ իբրև մեկ միասնական նպատակի հասնելու համար մարդկանց համախմբում տեսնողները առավել ստույգ են ընկալում կոոպերատիվի գաղափարը, սկզբունքները և արժեքները: Ըստ «Կոոպերատիվների միջազգային ասոցիացիայի» և «Աշխատանքի միջազգային կազմակերպության» սահմանման՝

«կոոպերատիվը մարդկանց ինքնավար ընկերակցությունն է, որոնք կամավոր կերպով միավորվում են՝ համատեղ սեփականություն հանդիսացող և ժողովրդավարական ձևով վերահսկվող ձեռնարկության միջոցով իրենց ընդհանուր տնտեսական, սոցիալական և մշակութային կարիքներն ու ձգտումները բարելավելու համար»<sup>3</sup>:

Կոոպերատիվի սկզբունքներն են՝

«կամավոր և բաց անդամությունը, անդամների կողմից կոոպերատիվի գործունեության ժողովրդավարական վերահսկողությունը, անդամների տնտեսական

<sup>3</sup> Տե՛ս, Վարդան Ուռուտյան, Կոոպերատիվներ. Կոոպերատիվի սկզբունքները և տնտեսական օգուտները

մասնակցությունը, ինքնավարությունն ու անկախությունը, կրթությունը, վերապատրաստումը և տեղեկատվությունը, համագործակցությունը կոոպերատիվների միջև, համայնքի մասին մտահոգվածությունը»<sup>4</sup>:

Կոոպերատիվի արժեքներն են՝

«փոխադարձ օգնությունը, ինքնապատասխանատվությունը, ժողովրդավարությունը, հավասարությունը, անաչառությունը, համերաշխությունը, համախմբվածությունը»<sup>5</sup>:

### **Համագործակցության պրակտիկաները և դրանց մասին պատկերացումները**

Ընդհանուր առմամբ պրակտիկաների մասին ստույգ տեղեկատվություն ստանալու համար հարկավոր է իրականացնել դիտարկումներ, քանի որ հաճախ պրակտիկաները կարող են լինել ոչ գիտակցված: Այնուամենայնիվ, կարևոր է նաև ֆոկուս խմբային քննարկումների միջոցով պարզել, թե համայնքներում համագործակցության պրակտիկաների մասին ինչն է վերբալացվում և ինչը՝ ոչ:

Ֆոկուս խմբային քննարկումներից պարզ է դարձել, որ որոշ համայնքներ ավելի համախմբված են, քան մյուսները: Համախմբված համայնքներում *փոխօգնությունը* կարևոր գործոն է, սակայն մարդիկ այն չեն բարձրաձայնում, մտածելով, որ «այլ կերպ չի էլ կարող լինել»: Ընդհանրապես պրակտիկաների մասին խոսելիս, հարցվողները հիմնականում կցկտուր տեղեկատվություն են տրամադրում և մեծ դժվարությամբ են վերբալացնում համատեղ պրակտիկաներին առնչվող նրբությունները: Համախմբվածության և փոխօգնության մասին խոսելիս, առաջին պլանում են ավանդական արարողությունները՝ թաղումն ու հարսանիքը: Օրինակ՝

«Մեր համայնքը շատ համախմբած է, եթե ասենք նույնիսկ փոքր խնդիրներ լինեն, մենք համախմբված ենք, բոլորս իրար կօգնենք: Աստված չանի, մի դեպք էլ լինի, գյուղով կանգնած ենք»: (*Պարզավան, կոոպերատիվին չանդամակցող կանայք*)

Կոոպերատիվները համայնքներում դեռ չեն ստեղծել «մենք»-ի՝ կոոպերատիվի անդամների և «նրանք»-ի՝ կոոպերատիվի ոչ անդամների, կերպարները: Համայնքներում գործող կոոպերատիվների մի մասը նույն ծառայությունն է մատուցում թե՛ կոոպերատիվի անդամին, և թե՛ ոչ անդամին.

«Գյուղացի ա էլի, տարբերություն չկա՝ կոոպերատիվի անդամ ա, թե՛ չէ, գործը գործ է մնում... Փոխզիջումների ենք գնում»: (*Թթուջուր, կոոպերատիվի անդամներ*)

---

<sup>4</sup> Նույն տեղում

<sup>5</sup> Նույն տեղում

Կան համայնքներ, որտեղ գյուղացիների կենսամակարդակը քիչ թե շատ նույնն է, իսկ մյուսներում՝ տարբերություններն ավելի նկատելի են: Այն համայնքներում, որտեղ կան հարուստ ֆերմերներ, համագյուղացիները փոքր խմբեր են ստեղծում և միասին աշխատում են ֆերմերների մոտ իբրև վարձու աշխատողներ: Ընդհանուր առմամբ, այն համայնքներում, որտեղ համագյուղացիների կենսամակարդակը քիչ թե շատ հավասար է, ֆոկուս խմբի մասնակիցները ավստասանքով են հայտնել, որ իրենց գյուղում չկա «հարուստ ֆերմեր», որի մոտ կկարողանային աշխատել կամ ով կկարողանար գյուղը ոտքի կանգնեցնել:

Կոոպերատիվի կամ կոոպերացիայի իրենց փորձի մասին խոսելիս, ֆոկուս խմբի անդամները կարևորել են համատեղ աշխատանքի մի շարք սկզբունքներ և ունակություններ: Կոոպերատիվի և կոոպերացիայի անդամները նշում են, որ միասին աշխատելու փորձը, մարդկանց մեջ բարձրացնում է *պատասխանատվության զգացումը*.

«Պատասխանատվության բարձրացում կա նաև, քանի որ էդ բերքն ու բարիքը, որ ստեղծվում է, բոլորի համար է»: (Գոմք, կանանց կոոպերատիվի անդամներ)

Կոոպերատիվի գործունեությունից խոսելիս *համախմբվածության* հետ մեկտեղ կարևորվել է նաև *պարտաճանաչությունն ու կազմակերպված լինելու* ունակությունը:

«Մենք պարտաճանաչ ենք և համախմբված, ու ժամանակին փակել ենք մեր վարկերը»: (Նոր կյանք, կոոպերատիվի անդամներ)

«Ամենակարևորը կազմակերպված ենք և մեկը մյուսի բացը լրացնում է: Թերի ոչինչ չի մնում»: (Գոմք, կանանց կոոպերատիվի անդամներ)

Ֆոկուս խմբերի մասնակիցների խոսակցություններից կարելի է եզրակացնել, որ կոոպերատիվի կամ կոոպերացիայի ներսում *պարտաճանաչությունը, կազմակերպվածությունն* ու *համախմբվածությունը* խմբերի առաջնորդների շնորհիվ է ձևավորվել՝ մեծ ջանքեր ու ժամանակ է պահանջել:

Կոոպերատիվի գործունեության մեջ պատասխանատվության ամենամեծ բաժինը ընկնում է կոոպերատիվի նախագահի վրա: Օրինակ՝ Գոմքի կոոպերատիվի նախագահը նշում է, որ կոոպերատիվի հաջողության համար յուրաքանչյուր անդամին *յուրահատուկ մոտեցում* է ցույց տվել.

«Պետք է ուսումնասիրել բոլորին անհատապես, յուրաքանչյուրին ահատական մոտեցում է պետք: Կանանց կոոպերատիվը հենց դա է անում, մեկս մյուսին օգնում ենք, օրինակ՝ մտածում ենք Աննայի երեխաներին ում մոտ թողնենք, որ Աննան մասնակցի սեմինարի: Այդ հարցի լուծումը մանկապարտեզի բացումն է: Եթե մարդ չկա պահող, ես կպահեմ: Կարող է բոլոր խնդիրները չլուծենք, շատ չկարողանանք իրար օգնել, բայց գոնե փորձում ենք»: (Գոմք, կանանց կոոպերատիվի անդամներ)

Ընդհանուր առմամբ, *ինքնակազմակերպումը* գյուղական համայնքներում մեծ խնդիր է: Կան մարդիկ, ովքեր նախկինում ունեցած իրենց փորձից ելնելով դարձել են ավելի զգուշավոր և վախենում են համատեղ քայլեր ձեռնարկել: Այն համայնքներում, որտեղ դեռ չկա կոոպերատիվ, մարդկանց մեջ նկատվում է ցանկություն ստեղծելու այն: Միաժամանակ կա մտավախություն. հաճախ կարելի է լսել այն կարծիքը, որ «ամեն մեկն իր հոգսով է ապրում»:

«Մարդկանց հոգեբանությունը փոխվեց սովետից հետո, ամեն մեկը իր անձնականը տարել էր իրա տանն էր պահում: Սովետը որ քանդվեց, կոլեկտիվ տնտեսություն որոշեցին սարքեն, որ անասունները առանձին տներ չգնային, այլ ընդհանուր: Մի քսան հոգի այդ անասուններին գոմեր էին տանում, պահում էին, վերջում երևի չարդարացրեց իրան:

Որոշ մարդկանց խմբերում կոոպերատիվը կաշխատի, որոշներում՝ չէ: Մարդկանց մտածելակերպը տարբեր է: Մարդ կա ինքնուրույն ա: Տենց մարդիկ են՝ ինքնապարփակված, իրանց ինչ էլ ուզում ես ասա կամ արա, ինքը իրա ասելիքը կասի, կասի ես առանձին եմ»: *(Խնձորուտ, կոոպերատիվ չունեցող համայնքի անդամներ)*

Կոոպերատիվը, ինչպես նշվել է նախորդ գլխում, նաև ընկալվում է իբրև *օգնություն ստանալու հնարավորություն*: Ֆոկուս խմբերի քննարկումների ժամանակ հաճախ կարելի է լսել այն տեսակետը, որ կոոպերատիվ ստեղծելու կամ կոոպերատիվին միանալու համար համայնքի բնակիչները ցանկանում են հաջողության երաշխիքներ ունենալ և համոզված լինել, որ կոոպերատիվի անդամները կարճ ժամանակում արդյունքներ կունենան.

«Ներողություն, իսկ էդ կոոպերատիվը, մենք մեր համայնքում մեր ուժերով պիտի ստեղծենք, թե՛... Պետք է տեսնենք, որ արդյունք կա:

Լավ ենթադրենք, մենք ուզում ենք չրի կոոպերատիվ հիմնել, կամ դեղաբույսերի փաթեթավորման կետ դնենք, մեզ մի կազմակերպություն կաջակցի՞, կամ կօգնի՞ ապարատուրա ձեռք բերենք»: *(Գեղամասար, կոոպերատիվ չունեցող համայնքի անդամներ)*

«Մարդիկ պիտի արդյունք տեսնեն, որ հասկանան ու հավատան»: *(Խնձորուտ, կոոպերատիվ չունեցող համայնքի անդամներ)*

Մարդկանց հակվածությունն ինքնուրույն ինչ-որ քայլեր ձեռնարկելու ավելի բարձր է այն համայնքներում, որտեղ միջազգային կառույցները իրականացրել են մի շարք ուսուցողական ծրագրեր: Ֆոկուս խմբերի մասնակից կոոպերատիվների ու ոչ ֆորմալ խմբերի մեծ մասը ստեղծվել են միջազգային կառույցների կողմից: Սկզբնական փուլում մարդիկ կոոպերատիվներին շատ թերահավատորեն են մոտեցել, սակայն միջազգային և տեղական

կառույցների կողմից ֆինանսավորվող ծրագրերի ժամանակ կոոպերատիվների և կոոպերացիայի անդամների մոտիվացիան կտրուկ աճել է: Այնուամենայնիվ, ծրագրերի ավարտից հետո կոոպերատիվները լուրջ խնդրի առաջ են կանգնել, քանի որ չեն կարողացել ծավալել իրենց գործունեությունը միայն անդամավճարներով: Մարդիկ հիասթափվել են և նվազել է կոոպերատիվի թե՛ հանդիպումների հաճախականությունը և թե՛ մարդկանց հաճախելիությունը:

*Հուսահատվածության* մթնոլորտին նպաստել են նաև անավարտ ծրագրերը: Օրինակ՝ Նոր կյանք (նաև հարակից Խոր վիրապ<sup>6</sup>) համայնքում կոոպերատիվին կից ստեղծվել էին կանանց հասարակական կազմակերպություններ: «Ամբողջ» օգնել էր կանանց ստեղծել կազմակերպություն, մասնագետներ էր հրավիրել և դասընթացներ անցկացրել՝ կանանց չրագործություն սովորեցնելու համար, սակայն նախագիծն անավարտ էր մնացել:

«Խոսք տվեցին, որ չրանոցներ հիմնեն, կանայք գնան աշխատեն, բայց չեղավ»: (Նոր կյանք, կոոպերատիվի անդամներ)

«Մի 120 կին էր հավաքվել: Իրենց հիմնական նպատակը չրագործությամբ զբաղվելը պետք է լիներ: Առաջին տարին աշխատեցին միայն: Հիմա ամեն մեկն իրենց տներում է էդ գործով զբաղվում»: (Խոր վիրապ, կոոպերատիվ նախագահ)

Մարդկանց «բացասական մտածողությունը» փոխվել է «դրականի» երկու համայնքում՝ Աշոտավանի ոչ ֆորմալ խմբում և Գոմքի կոոպերատիվում:

«Հիմա մտածում են, որ կարող են աշխատանք ստեղծել, առաջ այդպես չէր, մտածում էին, որ չկա աշխատանք»: (Գոմք, կանանց կոոպերատիվի անդամներ)

Կարծում ենք, որ մտածողության փոփոխության և դրանից բխող հաջողությունների հիմքում ընկած են մի քանի գործոններ: Նախ՝ այս համայնքներում ձևավորվել են համեմատաբար փոքր խմբեր՝ 20-25 հոգի, երկրորդը՝ ինտենսիվ և բազմապրոֆիլ ուսուցման ծրագրեր են իրականացվել, ներառյալ մարքեթինգի մասին դասընթացները և երրորդը՝ դրվել են փոքր և չափելի նպատակներ: Թեև այս երկու խմբերն էլ կանանց կոոպերատիվ և ոչ ֆորմալ խումբ են, մենք բավարար տվյալ չունենք՝ փաստելու, որ հաջողությունը պայմանավորված է նաև սեռով: Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ Գոմքի կոոպերատիվի հաջողության մեջ մեծ դեր են խաղացել նախագահի հմտությունները. իր գործունեության մեջ եղել է դեմոկրատ և ազնիվ ու իր բոլոր գործողությունները եղել են թափանցիկ:

Հետաքրքրական է, որ ուսուցման ծրագրերին մասնակցելու պրակտիկաների մասին երկու ծայրահեղ վերաբերմունք է արտահայտվել: Ըստ հարցվածների մի խմբի՝ դասընթացները

---

<sup>6</sup> Խոր վիրապի կոոպերատիվի նախագահը մասնակցել էր Նոր կյանք համայնքում իրականացված ֆոկլուս խմբային քննարկմանը:

անհմաստ են, իսկ ըստ մյուս խմբի՝ աճելու և զարգանալու բացառիկ հնարավորություն են ընձեռում: Օրինակներ՝

«Մենք գնացել ենք դասընթացների, բիզնես ծրագիր ենք գրել չորս հոգով, ես անձամբ տարել հանձնել եմ, բայց ֆինանսավորում չեն տվել, մնաց օդում, լավ, սովորեցրիք գրել, բայց այդքանը՝: Անհմաստ էր»: *(Գեղամասար, կոոպերատիվ չունեցող համայնքի անդամներ)*

«Ամեն թեմայով սեմինարի մասնակցել ենք՝ գյուղատնտեսության, գենդերային, լիդերության, մարքեթինգային, հաշվապահության: Անընդհատ մասնակցում ենք թրեյնինգների: Հիմա մեր կանայք էնքան են գաղափարապես զարգացել, որ յուրաքանչյուր ծրագիր իրականացնելու համար պատրաստ մարդիկ են: Հետո, յուրաքանչյուր գործընթաց սեմինար է պահանջում»: *(Գոմք, կանանց կոոպերատիվի անդամներ)*

Ֆոկուս խմբերի քննարկումները հնարավորություն տվեցին եզրակացնել, որ կոոպերատիվի հաջողությունը կախված է թե՛ նախագահների հետևողականությունից, ազնիվ լինելուց, ոգեշնչելու ու կազմակերպչական այլ ունակություններից, և թե՛ անդամների մոտիվացիայից, ինքնակազմակերպվածությունից, նպատակներին հետամուտ լինելու, ծախսողումներից չհիասթափվելու կարողություններից և համագործակցելու ունակությունից:

## **Կոոպերատիվների խնդիրները և հնարավորությունները**

Զեկույցի այս մասում կներկայացնենք, թե որոնք են հարցված կոոպերատիվների խնդիրները և ինչ հնարավորություններ են նրանք ստեղծում:

Ֆոկուս խմբերի մասնակիցները գրեթե միաձայն պնդում են, որ *գյուղատնտեսական ապրանքի իրացման հարցը* համար մեկ խնդիրն է իրենց համայնքում:

«Շուկայի հարցն է, լավ, ասենք, այդքան դեղձը աճեցրեցինք, հետո ի՞նչ անենք: Իրացման հարցն է»: *(Բերդավան, կոոպերատիվի նախկին անդամներ)*

Հարցված կոոպերատիվներից և ոչ մեկը այս հարցին *անդրադառնալու հնարավորություններ դեռ չունի*: Հատկանշական է, որ Աշոտավանի ազնվամորի արտադրողների կանանց խումբը, որ բաղկացած է 9 հոգուց և ստեղծվել է «Վորլդ Վիժն» կազմակերպության աջակցությամբ, նման խնդիր չունի՝ հավաքված ազնվամորին ամբողջությամբ իրացվում է ինչպես ՀՀ տարածքում, այնպես էլ Արցախում: Իրացումն իրականացնում են միջնորդները՝ խմբի կողմից սահմանված գնով:

«Մենք միասին մալինան վաճառում ենք նույն գնով, էնպես ենք անում, որ մեր գինը կարողանում ենք պահել, պաշտպանում ենք էդ գինը»: *(Աշոտավան, կանանց ոչ ֆորմալ կոոպերացիա)*



Ոչ ֆորմալ խմբի անդամները այս պահին ազնվամորին աճեցնում են իրենց տնամերձերում և ակնկալում են պահուստային ֆոնդից ջրովի հող ստանալ, որպեսզի ազնվամորու մշակման ծավալները մեծացնեն: Այս խումբը ազնվամորու մշակման նոր տեխնոլոգիա է ներմուծել: Կոոպերացիայի կողմից ստեղծված այս հնարավորությունից օգտվում են Աշոտավանի և հարակից համայնքների գյուղացիները:

«Համայնքում այսօր մեր խումբն է զբաղվում մալինայի արտադրությամբ: Մենք նաև տեղեկատվություն ենք տալիս զարգացման նոր տեխնոլոգիայի մասին ամբողջ համայնքին և հարակից համայնքներին նույնպես: Գրականություն ենք բաժանում, շփվում ենք, ծանոթություններ ենք ձեռք բերում, շուկաներ ենք ձեռք բերում»:  
*(Աշոտավան, կանանց ոչ ֆորմալ կոոպերացիա)*

Համայնքների մեկ այլ խնդիր, որոնց կոոպերատիվները քիչ թե շատ կարողանում են արձագանքել՝ *տեխնիկայի մատակարարումն է*: Յուրաքանչյուր համայնքի կոոպերատիվ ունի իր խնդիրները կապված տեխնիկայի հետ: Բերդավանի կոոպերատիվի նախկին անդամները նշում են, որ կոոպերատիվին անդամակցելը անիմաստ էր, քանի որ այն տեխնիկայի հարց չէր կարողանում լուծել:

«Ընդհարապես գյուղում աշխատող տեխնիկա չկա: Կոոպերատիվի տեխնիկան հին է, փչանում է: Մի օր աշխատում է, հինգ օր կանգնած է: Կոմբայն չունենք, հնձիչ չկա, տուկ կապող չկա, ոչինչ էլ չկա: Թումանյանից եկել են իրենց տեխնիկայով, օգնել են, փողը տվել ենք, գործը արել են, բայց ամեն տարի հո չե՞ն գալիս, այ եթե մենք էլ ունենայինք տեխնիկա...»: *(Բերդավան, կոոպերատիվի նախկին անդամներ)*

Շաքի համայնքի կոոպերատիվը երկու տարի է ինչ ստեղծվել է և իր հիմնական աշխատանքները դեռ չի սկսել: Ստացել է մամլիչ, ձեռքի խոտհնձիչ, երկու տրակտոր: Քանի որ կոոպերատիվի անդամները շատ են՝ 75 հոգի, իսկ հողերը իրարից հեռու են, եղած տեխնիկայով կոոպերատիվը չի հասցնում օգնել բոլորին:

«Տեխնիկայի պահանջն էլ է շատանում անդամների քանակին զուգահեռ: Այսօր մենք բոլոր տեխնիկաներով ապահովված չենք, որ կարողանանք մեր ստացած տեխնիկայով կոոպերատիվի հարցերը լուծել: Տեխնիկայի պակաս կա, օրինակ՝ կոմբայն և վարող տրակտոր չունենք»:  
*(Շաքի, կոոպերատիվի անդամներ)*

Մեկ այլ խնդիր է տեխնիկայի որակը. ստացված *տեխնիկան չի համապատասխանում տեղանքին* և արագ փչանում է.

«Մեր նոր ստացած տեխնիկաները չեն համապատասխանում մեր դաշտերին, ասենք, քարքարոտ են դաշտերը, դանակները կտրվում-փչանում են, իսկ մի հատը

փոխելը արժի 30.000 դրամ: Ստացած շահույթը հազիվ հերիքի, որ փչացած տեխնիկան վերանորոգենք»: (Շաքի, կոոպերատիվի անդամներ)

«Մի տրակտոր են տվել, բայց հիմա չի աշխատում, մեկ-երկու տարի աշխատեց, հետո խարաբ եղավ»: (Նոր կյանք, կոոպերատիվի անդամներ)

Ընդհանուր առմամբ, հարցված կոոպերատիվների հնարավորությունները մեծ չեն: Կոոպերատիվները փաստացի իրենց գոյության հարցն են լուծում, չեն կարողանում շահույթ ստանալ:

«Շահույթ չկա: Մեր պայմաններում, հազիվ իր գոյությունն է ապահովում»: (Շաքի, կոոպերատիվի անդամներ)

«Կոոպերատիվը չի կարողանում էդ մարդկանց օգնի՝ հնարավորություն չկա»: (Նոր կյանք, կոոպերատիվի անդամներ)

Նոր կյանք համայնքի կոոպերատիվը ստեղծվել է 2010 թվականին «Ամբոր» կազմակերպության կողմից: Ժամանակին կոոպերատիվը ֆինանսավորում է ստացել՝ աշխատավարձի և գյուղտեխնիկայի տեսքով, սակայն այժմ գործունեություն ծավալելու համար չունի բավարար միջոցներ: Կոոպերատիվին անդամակցելու միակ շարժառիթը ցածր տոկոսով վարկերի ստացումն է «Ջինիշյան» հիմնադրամից:

«Ֆինանսավորումը վերջացավ, ինձ տարան ընդունելության Ազգային Ժողով: Էդքան խոսում են՝ կոոպերատիվները ընդլայնենք, չգիտեմ ինչ անենք: Ընդամենը խնդրում եմ՝ ֆինասավորել եք, կոոպերատիվ եք ստեղծել, հիմա ի՞նչ հնարավորություններ եք տալիս: Ասում են՝ ընդհանրապես ոչ մի բան: Ասում եմ՝ ֆինանսապես չեք ուզում օգնեք, գոնե սայարկա, գոնե տեխնիկա, գոնե ինչ-որ բան՝ գործիք-մործիք տվեք, ասում են՝ չէ: Դե բա ստեղծել եք կոոպերատիվը, հիմա օգնեք մի քիչ, որ պահենք կոոպերատիվը: Եթե հիմա նույնն է լինելու, ինչ Պողոսը տրակտորը վարի, էլ իմաստը որն է, որ մարդ կոոպերատիվի անդամավճար վճարի 1000 դրամ: Կոոպերատիվի տարբերությունն էլ ինչո՞ւմ է»: (Նոր կյանք, կոոպերատիվի անդամներ)

Գրեթե նմանատիպ իրավիճակ է Հացիկ համայնքում, որտեղ կոոպերատիվը ստեղծվել է 2009 թվականին «Ամբոր» կազմակերպության օգնությամբ: «Ամբորը» կոոպերատիվին տրամադրել էր գյուղտեխնիկա՝ տրակտոր և գյուղգործիքներ՝ գութան, խոտհնձիչ: Կոոպերատիվի գործիքների մյուս մասը գնել է կոոպերատիվի նախագահը: Օրինակ՝ վաճառել է վարող գութանը և գնել սրսկիչ: Մինչև 2015 թվականը տարբեր ծառայություններ են մատուցել՝ սեզոնային սրսկումներ, մշակում և վարք, սակայն արդեն 1 տարի է ինչ կոոպերատիվը չի գործում՝ այս տարի նախագահը ոչ մի քայլ չի ձեռնարկել որևէ ծրագրի

մասնակցելու համար: Ինչպես նախորդ համայնքում, այստեղ նույնպես հուսահատությունը խնդիր էր.

«Անդամավճարները չեն աշխատում, իսկ գյուղապետարանը չի կարողանում ներդրումներ անել: Հիմա մարդիկ գերադասում են առնել սրկիչ ու իրենց 10 շաբթ այգին սրկել: Մի 30.000 դրամ է: Հետո՝ անվճարունակ են: Ես իմ տղային տվեցի տրակտորը, աչքի լույսի նման պահել է: Բայց ինքը աշխատում էր, իսկ ժողովուրդը անվճարունակ էր, փող չէին տալիս: Հիմա աշխատում ես, ասում են աշնանը կվճարենք, հետո աշունը գալիս է, էլի չեն տալիս փողը»: (*Հացիկ, կոոպերատիվի անդամներ*)

Այնուամենայնիվ, կոոպերատիվի անդամները մի քանի տարի շարունակ օգտվել են ցածր տոկոսադրույքով վարկեր ստանալու հնարավորությունից, որը տրամադրել է «Քարդ»-ը:

Ֆինանսական միջոցներ հայթայթելը կոոպերատիվների ամենամեծ խնդիրն է Հայաստանում: Կոոպերատիվները դիմում են տարբեր կառույցների՝ պետական մարմիններին, տեղական և միջազգային կազմակերպություններին, որպեսզի ինչ-որ չափով կարողանան ապահովել կոոպերատիվի գործունեությունը: Ֆոկուս խմբային քննարկումները ցույց են տալիս, որ կոոպերատիվների հնարավորությունները Հայաստանում սահմանափակ են, քանի որ վերջիններս դեռ կայացման փուլում են գտնվում: Ինքնուրույն ու անկախ գործելու համար այս կառույցները դեռ մեծ ուղի ունեն անցնելու: Այնուամենայնիվ, առկա սահմանափակումների ներքո կոոպերատիվները ձեռնարկում են քայլեր, որոնք փոփոխություններ են ներմուծում կոոպերատիվի անդամների գործունեության մեջ: Օրինակ՝ Թթուջուր համայնքը, որը հիմնականում զբաղվում է խոշոր և մանր անասնապահությամբ, կոոպերատիվի շնորհիվ կարողացել է համայնքում հողագործություն զարգացնել: Թթուջուր համայնքի կոոպերատիվը միջազգային և տեղական կազմակերպությունների շնորհիվ՝ «Հեյֆեր» և «Շեն», ստացել է շարքացան, 2 հավաքիչ, կապիչ, ձեռքի հնձիչներ: Այս ներդրումների միջոցով այն կարողացել է դիվերսիֆիկացնել համայնքի գյուղատնտեսական գործունեությունը.

«Հողագործություն, ճիշտն ասած, համարյա թե չկա մեզ մոտ: Ու էս մեր կոոպերատիվի շնորհիվ մի 60 հետկար հող վարվել է: Դրա մեծ մասը գարի է ցանվել գարնանը: Հիմա պատրաստվում ենք դա հնձենք, որ նորից վարենք, ցորեն ցանենք»: (*Թթուջուր, կոոպերատիվի անդամներ*)

Թթուջուրի կոոպերատիվի օրինակի հիման վրա կարելի է պնդել, որ կոոպերատիվը հնարավորություն է ընձեռում համայնքում նոր գյուղատնտեսական գործունեություն ծավալել:

Կոոպերատիվների մեկ այլ խնդիր էլ որոշումներ կայացնելու գործընթացն է: Յուրաքանչյուր հարց հնչեցնելիս, արված քննարկումների և դիտարկումների հիման վրա կարելի է մոտարկել, թե քննարկումներն ինչպես են ընթանում կոոպերատիվներում: Օրինակ, կարելի է ենթադրել, որ Հացիկում որոշումները կայացվում են կոոպերատիվի նախագահի կողմից, իսկ Շաքիում և Նոր Կյանքում կոոպերատիվի գործունեության մեջ ակտիվորեն ներգրավված է գյուղապետը: Որոշումներ ընդունելու առումով թերևս ավելի դեմոկրատական են Գոմքի կոոպերատիվը և Աշոտավանի կոոպերացիան<sup>7</sup>: Օրինակ՝ Աշոտավանի կոոպերացիայում աշխատանքներ համակարգողը ամեն ամիս փոխվում է. այսպես յուրաքանչյուր անդամ հնարավորություն է ունենում լինել համակարգող:

«Նիստերի միջոցով ենք ղեկավարում հիմնականը: Եթե առիթ է լինում, ամսվա մեջ երկու-երեք անգամ ենք նիստ անում, եթե ոչ՝ ամիսը մի անգամ: Ամեն ամիս համակարգողը ընտրում է իր քարտուղարին: Էս ամիս կոնկրետ ես եմ համակարգողը, իսկ Լուսինեն իմ քարտուղարուհին է»: *(Աշոտավան, կանանց ոչ ֆորմալ կոոպերացիա)*

Այնուամենայնիվ, կոոպերացիան որոշել է ապագայում ընտրել մեկին, ում կազմակերպչական և ներկայացուցչական ունակությունները կլինեն լավագույնը, ինչից էլ կշահեն կոոպերացիայի բոլոր անդամները: Այն համայնքներում, որտեղ կոոպերատիվներ չկան, կոոպերատիվ ստեղծելու նախապայմանների մեջ նույնպես կարևորվել է «լավ կազմակերպիչ» ունենալու գործոնը:

Ընդհանրացնելով ձեռք բերված տվյալները՝ կարելի է պնդել, որ կոոպերատիվները հնարավորություն են տալիս իրենց անդամներին օգտվել ցածր տոկոսադրույքով վարկերից և կոոպերատիվի գյուղտեխնիկայից: Գյուղտեխնիկայի առկայությունից և այն շուկայականից ցածր գներով վարձակալելու հնարավորությունից շահում է կոոպերատիվի յուրաքանչյուր անդամ, իսկ որոշ դեպքերում նաև ողջ համայնքը: Կոոպերատիվների ուժեղ կողմերից է նաև այն, որ ժամանակի ընթացքում կոոպերատիվների անդամները դառնում են ավելի համախմբված ու համագործակցող և նոր մտածողություն են ձեռք բերում:

Այն հարցին, թե արդյո՞ք կոոպերատիվը ապագա կունենա մեր երկրում, հարցվածների ճնշող մեծամասնությունը պատասխանել է «այո» և նշել, թե որ պարագայում է դա հնարավոր: Մասնավորապես կարևորվել են աշխատանքային կամքը, սկզբունքայնությունը, ձգտումները, մտածելակերպի փոփոխությունը.

«Ես կարծում եմ դա մարդկային գործոնից է կախված, ոչ թե երկրի վիճակից: Կարող է ներքաղաքական վիճակը բարդանա, բայց եթե կոոպերատիվի անդամներ

---

<sup>7</sup> Այս պնդումը հիմնված է ֆոկուս խմբերի քննարկման ժամանակ արված դիտարկումների հիման վրա:

աշխատանքային կամք ունենան, սկզբունք, ձգտում ու նպատակ ունենան, անկախ երկրի ներքաղաքական վիճակից՝ նրանք կարող են աշխատել»: (Շաքի, կոոպերատիվի անդամներ)

«Մտածելակերպը պետք է փոխվի: Վերևից չի գալիս, մեզանից է գալիս: Մեկս մյուսին չենք վստահում, չենք աջակցում իրար»: (Հացիկ, կոոպերատիվի անդամներ)

Աշոտավանի կոոպերացիայի անդամները նշում են, որ ապագան հենց կոոպերատիվներինն է, քանի որ նույնիսկ իրենց փոքրիկ կոոպերացիան փոխել է համայնքի կենսամակարդակը և աշխուժություն է բերել գյուղին.

«Կենսամակարդակն է բարձրանում, պատասխանատվության զգացումը: Օրինակ՝ ես իմ տղային սովորեցնում եմ նույնը, որ շարունակելի լինի: Գյուղատնտեսություն է զարգանում սրանով: Աշխատատեղ է ստեղծվում»: (Աշոտավան, կանանց ոչ ֆորմալ կոոպերացիա)

Մարդկանց մեկ այլ խումբ էլ կասկածանքով է վերաբերում կոոպերատիվներին դերին: Այս մարդկանց խոսքերում գերակշռում են հուսահատվածությունն ու վատատեսությունը.

«Քանի հովանավոր չունենք, ոչինչ էլ չի լինի: Լրիվ միջոցի հետ կապված հարց է: Մենք ուժ չունենք: Մեզ մի հատ լավ տեր ա պետք, որ մենք լավ աշխատենք: Թիկունքներումս մարդ չունենք»: (Բերդավան, կոոպերատիվի նախկին անդամներ)

## **ԲԱԺԻՆ 4. «ԲԵՐԴԱՎԱՆ» ՊՏՂԱԲՈՒԾԱԿԱՆ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎ. ԴԵՊՔԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ**

### **Գործունեության նկարագրություն**

«Բերդավան» կոոպերատիվը ստեղծվել է 2013 թ.-ին՝ խաղողի և դեղձի արտադրության և իրացման խնդիրները համատեղ ուժերով լուծելու նպատակով, ինչը հնարավորություն կտար ավելացնել կոոպերատիվի անդամների եկամուտները:

Այս պահին կոոպերատիվը հիմնականում մատուցում է գյուղսպասարկման ծառայություններ (բուժումներ, խոտհունձ, հետագայում կկատարվի նաև վար) վարչության կողմից սահմանված սակագներով, որոնք շուկայականից ցածր են 20-25 տոկոսով:

Կոոպերատիվը ներկայումս ունի 41 անդամ, որոնցից 5-ը վարչության անդամ են: Կոոպերատիվի գործունեության խթանման նպատակով «Շեն» ԲՀԿ-ը «Բերդավան»-

ին տրամադրել է S-54 Վ մակնիշի տրակտոր, սրակիչ, ձեռքի հնձիչ և ֆրեզ: Կոոպերատիվը շուտով կունենա ևս մի տրակտոր և խոտ հավաքող ֆրեզ, որոնք ձեռք են բերվելու «Շեն Ֆրանսիայի», համայնքի և կոոպերատիվի սեփական ներդրման շնորհիվ:

Համաձայն կոոպերատիվի կանոնադրության՝ կոոպերատիվի նպատակներն են՝

1. Օժանդակել գյուղացիական տնտեսություններին պտղաբուծության և խաղողագործության զարգացման, պարարտանյութերի և բույսերի պաշտպանության միջոցների ձեռքբերման ու օգտագործման, ագրոտեխնիկական սպասարկման, ինչպես նաև արտադրանքի իրացման հարցերում,
2. Աջակցել կոոպերատիվի անդամներին գյուղատնտեսական մթերքների արտադրության քանակի ավելացման, որակի բարելավման, ինքնարժեքի իջեցման և նոր շուկաների որոնման հարցերում,
3. Նպաստել գյուղատնտեսության զարգացմանը տարածաշրջանում, նոր տեխնոլոգիաների ներդրմանը,
4. Նպաստել կոոպերատիվի անդամների սոցիալ-տնտեսական, կուլտուր-կենցաղային խնդիրների լուծմանը,
5. Օժանդակել շրջակա միջավայրի պահպանությանը և նպաստել բնապահպանական խնդիրների լուծմանը,
6. Կազմակերպել ուսուցողական և տեղեկատվական դասընթացներ անդամների համար գյուղատնտեսության բոլոր բնագավառների հարցերով,
7. Իրականացնել բարեգործական գործունեություն:

Կանոնադրությամբ սահմանված նպատակներից ներկա դրությամբ կոոպերատիվի շեշտադրումը այգիների մշակումն է և գյուղտեխնիկայի ձեռքբերումը: Այստեղից հետևում է նաև կոոպերատիվի անդամների գյուղմթերքի որակի բարելավումը և քանակի ավելացումը, ինչը և հանգեցնում է նրանց եկամուտների աճի:

Ներկա փուլում արտադրանքի իրացման խնդիրները առաջնային չեն, քանի որ որակյալ մեծաքանակ դեղձ չի հաջողվում արտադրել կլիմայական անբարենպաստ պայմանների և ոռոգման ջրի հետ կապված խնդրի պատճառով, իսկ խաղողը հիմնականում տեխնիկական սորտերի է, որոնց մեծածախ վաճառքի գինը արտադրողից կախված չէ, քանի որ սահմանվում է խաղող ընդունող գործարանի կողմից: Ներկա պահին Բերդավանի գյուղացիները խաղողը հանձնում են ընդամենը մեկ գործարանի և ստիպված են հարմարվել թելադրվող գներին: Նշենք

նաև, որ ՀՀում գործող խաղող վերամշակող այլ գործարանների առաջարկած գները նույնական են, ուստի կոոպերատիվն իր կողմից մարքեթինգային գործունեության ծավալման արդյունքում չի ակնկալում ստանալ վաճառվող խաղողի առավել բարենպաստ գին: Այն գյուղացիները, ովքեր մշակում են խաղողի սեղանի սորտեր, կարողանում են իրացնել իրենց ապրանքը ինքնուրույն, քանի որ արտադրանքի ծավալը մեծ չէ, և մանրածախ վաճառքը մասնավոր գնորդներին այս դեպքում ավելի եկամտաբեր է: Սա վերաբերում է նաև դեղձի վաճառքին:

Տարածաշրջանում գյուղատնտեսության խթանման հարցում կոոպերատիվի ներդրումն այն է, որ շատերը, ովքեր ունեին չմշակվող հողատարածք, սկսել են զբաղվել հողերի մշակմամբ, քանի որ արդեն առկա են տեխնիկական հնարավորություններ:

Պարարտանյութերի և բույսերի ձեռքբերման հարցում օժանդակություն առայժմ արտահայտվում է տեղեկատվության տրամադրման միջոցով: Գյուղացիները տեղեկացվում են, թե որտեղից և ինչ պարարտանյութեր կարող են ձեռք բերվել:

Խաղողի իրացման նոր շուկաների որոնման խնդրով կոոպերատիվը նույնպես զբաղվում է, սակայն հաջողությունների դեռ չի հասել:

Ինչ վերբերում է ուսուցողական դասընթացների կազմակերպմանը, ապա կոոպերատիվի ներկայացուցիչները մասնակցել են իրազեկման մի շարք դասընթացների, որտեղ ներկայացվել են անդամների համագործակցության սկզբունքները, նրանց իրավունքներն ու պարտականությունները, կոոպերատիվների առավելությունները, առկա հնարավորությունները և ռիսկերը, օրենսդրական կարգավորման դաշտի նկարագիրը, կոոպերատիվների տեսակները և այլն: Կոոպերատիվի նախագահը և վարչության ներկայացուցիչները մասնակցել են կոոպերատիվների կառավարման մասին դասընթացի, կազմել են եռամյա բիզնես ծրագիր և գործողությունների պլան: Կոոպերատիվն իր անդամներին տրամադրում է անհատական խորհրդատվություն գյուղատնտեսական մի շարք հարցերի և խնդիրների շուրջ այդ թվում՝ ինչպես ճիշտ մշակել հողը, ինչպես օգտագործել բուժանյութերը, պարարտանյութերը, ինչպես վարվել դեղձի և խաղողի տարատեսակ հիվանդությունների դեպքում և այլն:

Կոոպերատիվն ունի շրջակա միջավայրի պահպանման և էկոլոգիական խնդիրներով զբաղվելու հեռանկարային ծրագիր ըստ որի՝ համայնքը իր տրամադրության տակ գտնվող տրակտորը պետք է նվիրաբերի կոոպերատիվին, որի միջոցով բացի գյուղատնտեսական աշխատանքներ կատարելուց, կոոպերատիվը կզբաղվի նաև աղբահանման աշխատանքներով:

Կոոպերատիվի հնարավորությունները խիստ սահմանափակ են, հետևապես կոոպերատիվը իր անդամների սոցիալ-տնտեսական, կուլտուր-կենցաղային խնդիրների լուծմանը աջակցում է հնարավորության սահմանում՝ ապահովելով գյուղատնտեսական աշխատանքերի կատարմամբ, որը որոշ չափով բարելավում է գյուղացիների կենսամակարդակը:

Կոոպերատիվը իրականացրել է նաև բարեգործական գործունեություն՝ գյուղում մի երեխայի բուժման ծախսերը հոգալու նպատակով ֆինանսական միջոցներ հատկացնելով:

### **Ֆինանսական տվյալներ**

2015 թ. կոոպերատիվը 1.278.000 ՀՀ դրամ ստացել է ծառայավճարներից: Կոոպերատիվը գյուղատնտեսական ծառայություններ է մատուցում կոոպերատիվին չանդամակցող գյուղացիներին ևս: Եթե անդամների համար ծառայությունների արժեքը կազմում է շուկայական գներից 20-25% էժան, ապա ոչ անդամների համար ծառայություններն արժեն շուկայականից մինչև 10% էժան: Հավաքված գումարով կատարվում են գյուղտեխնիկայի պահպանման և կոոպերատիվի ծախսերը: Թեև կոոպերատիվի կանոնադրությունը թույլ չի տալիս ծառայություններ մատուցել անդամ չհաղիսացող անձանց, կոոպերատիվը այլ տարբերակ չունի հոգալու իր նվազագույն ծախսերը, քանի որ անդամները չեն վճարում կանոնադրությամբ նախատեսված անդամավճարները: Պատճառն այն է, որ նախ անդամներից ոչ բոլորն են օգտվում կոոպերատիվի մատուցած ծառայություններից, ինչպես նաև ոչ բոլորն են վճարում: 2015թ. կոոպերատիվի ադմինիստրատիվ ծախսերը կազմել են 225,000 ՀՀ դրամ (նախագահի և հաշվապահի երեք ամսվա աշխատավարձ, նախագահը կատարում է նաև հաշվապահի պարտականությունները): Աշխատուժի վարձակալության համար վճարել են 495,000 ՀՀ դրամ: Գյուղտեխնիկայի վարձակալության համար կոոպերատիվը ծախսել է 128,000 ՀՀ դրամ, վառելանյութի համար ծախսվել է 239,400 ՀՀ դրամ: Կոոպերատիվը 200,000 ՀՀ դրամի փոխառություն է տվել անդամներին բուժանյութեր/պարարտանյութեր ձեռք բերելու համար: Գյուղտեխնիկայի վերանորոգման համար հատկացրել են 148,550 ՀՀ դրամ, տրասպորտային ծախսերը կազմել են 77,000 ՀՀ դրամ: Կոոպերատիվը առայժմ ունի չհավաքագրված ծառայավճարներ և նախորդ տարվա 474,000 ՀՀ դրամի չափով գրանցված շահույթի հաշվին է փակել ծախսերի մի մասը:



## **Հիմնական ձեռքբերումներ**

Կոոպերատիվի վարչության ներկայացուցիչների խոսքով կոոպերատիվի հիմնական ձեռքբերումը գյուղատնտեսական աշխատանքների ծախսարդյունավետության բարձրացումն է: Կոոպերատիվն անդամներին շուկայականից ցածր գներով ծառայություններ է մատուցում, ինչը թույլ է տալիս նվազեցնել ապրանքի ինքնարժեքը: Բացի այդ, մշակման ճիշտ տեխնոլոգիաների կիրառման արդյունքում բարձրանում է նաև բերքատվությունը:

Հետազոտության շրջանակներում զրուցեցինք «Բերդավան» սպառողական կոոպերատիվի անդամներից 19-ի հետ: Նրանց մեծ մասը նշեց, որ կոոպերատիվին անդամակցելուց հետո արտադրանքի ծավալը աճել է: Դրան զուգահեռ անդամներից մեկ երրորդի եկամուտներն ավելացել են, մեկ երրորդը նշել է, որ եկամուտները չի փոփոխվել, իսկ մնացածի եկամուտները նվազել են: Ինչ վերաբերում է արտադրանքի որակին, ապա այն կամ բարելավվել է կամ մնացել է նույնը:

Անդամներից շատերը կոոպերատիվի ձեռքբերում են համարում այն, որ այգիների մշակումն իրականացվում է մեքենայացված, ինչի շնորհիվ աշխատանքի կազմակերպումը բարելավվել է և հեշտացել:

Անդամների մեծ մասը կոոպերատիվի գործունեությունից ավելի շուտ գոհ է: Միայն մի քանիսն են նշել, որ բավարարված չեն կոոպերատիվի աշխատանքից: Մեծ մասը նշում է, որ համագյուղացիներին հորդորում է դառնալ կոոպերատիվի անդամ, քանի որ կոոպերատիվին անդամագրվելը հնարավորություն է ստեղծում ավելի կազմակերպված, ժամանակին իրականացնել գյուղատնտեսական աշխատանքները, իրականացնել մեքենայացված մշակում, օգտվել ծառայություններից ավելի էժան գներով, ինչի հետևանքով նվազում է ինքնարժեքը: Հատկապես նշվել է, որ բարելավվել է ոռոգման ջրի մատակարարումը:

Հարկ է նշել նաև, որ կոոպերատիվի ծառայություններից օգտվում են ոչ միայն կոոպերատիվի անդամները, այլև համայնքի մյուս բնակիչները, թեև փոքր ինչ թանկ սակագներով: Կոոպերատիվի ներկայացուցիչների հավաստմամբ աշխատանքները կազմակերպվում են այնպես, որ հերթեր չեն գոյանում և բոլոր շահառուները կարողանում են ժամանակին օգտվել անհրաժեշտ ծառայություններից: Կոոպերատիվը նաև հնարավորություն է ընձեռում ծառայությունների դիմաց վճարել տարեվերջին՝ բերքը իրացնելուց հետո, ինչը կոոպերատիվի անդամների համար լրացուցիչ շահագրգռող գործոն է:

Կոոպերատիվի ներկայացուցիչները նշում են նաև, որ կոոպերատիվը հնարավորություն է տալիս դիմելու տարբեր ծրագրերի, որոնք ֆիզիկական անձանց

համար անհասանելի են: Թեև մինչ այժմ «Բերդավան»-ի ներկայացրած երկու առաջարկ դոնորները մերժել են, կոոպերատիվը շարունակում է մասնակցել մրցույթների:

### **Հիմնական խոչընդոտներ**

Կոոպերատիվի ներկայացուցիչների կարծիքով «Բերդավան»-ի հիմնական խնդիրները արտադրական են, ինչպիսիք են ոռոգման ջրի անբավարարությունը, գյուղտեխնիկայի անբավարարությունը (կոոպերատիվը չունի կոմբայն, շարքացան), բուժանյութերի անորակությունը, գյուղատնտեսական գիտելիքների պակասը, ինչպես նաև բիզնեսը գնահատելու և կառավարելու հմտությունների պակասը:

Կարևոր խնդիր է նաև կոոպերատիվի անդամների շահագրգռվածության պակասը: Այս խնդիրը հիմնականում պայմանավորված է գյուղացիների ֆինանսական դժվարությունների հետ, բոլորին կոոպերատիվի մատուցած ծառայությունները պետք են, սակայն չենք կարողանում վճարել: Համախմբվածության մակարդակն էլ առնաձնապես բարձր չէ, միասին աշխատելու առավելությունները տեսականորեն բոլորը գիտակցում են, բայց ներդրում անել պատրաստ չեն:

Փորձը ցույց է տալիս, որ առավել ակտիվ են այն անդամները, որոնց հողակտորները մեծ են և, հետևաբար, դրանցից ստացվող եկամուտը էական է: Այս դեպքում գյուղտեխնիկայի կիրառությունը հեշտացնում է մշակությունը և տնտեսապես ձեռնտու է լինում, իսկ փոքր հողակտորները լրացուցիչ ծախսեր չանելու համար մշակում են իրենք, չեն համագործակցում: Այս կարծիքը հաստատեցին նաև կոոպերատիվի անդամների հետ հարցազրույցները, երբ պարզվեց, որ կոոպերատիվի անդամների ճնշող մեծամասնությունն ունի խաղողի կամ դեղձի փոքր հողակտորներ, որոնցից ստացված շահույթը ընտանիքների ընդհանուր եկամուտների մեջ էական դեր չի խաղում, ուստի անդամները դրանց հետ մեծ հույսեր չեն կապում և ակտիվ չեն մասնակցում կոոպերատիվի կառավարմանը: Համատեղ մշակությանը խանգարում է նաև այն, որ հողակտորները սահմանակից չեն:

Կոոպերատիվի ներկայացուցիչներին մտահոգում է այն, որ գյուղի երիտասարդությունը գյուղատնտեսական աշխատանքներից առհասարակ խուսափում է, և կոոպերատիվի անդամներից շատ քչերն են երիտասարդ:

Ուշագրավ է նաև կոոպերատիվների անդամների հավաքագրման քաղաքականությունը: Միջազգային կամ տեղական կազմակերպություններից,

ինչպես նաև պետությունից աջակցություն ստանալու նպատակով կոոպերատիվները ստիպված են ընդգրկել մեծ թվով անդամներ, քանի որ հակառակ դեպքում ֆինանսավորում գտնելը դժվար է: Ավելին՝ երբ կոոպերատիվի ստեղծմանը օժանդակում են միջազգային կամ պետական կառույցներ, վերջիններս սահմանում են կոոպերատիվի նվազագույն անդամների թիվը, որից պակասի դեպքում կոոպերատիվն օժանդակություն չի ստանա: Այս փաստը դոնորների տեսանկյունից արդարացված է, քանի որ ծրագրի շահառուներն այս պարագայում շատ են, սակայն, փորձը ցույց է տալիս, որ կոոպերատիվի աշխատանքների կազմակերպման տեսանկյունից շատ ադամներ ունենալը խոչընդոտ է հանդիսանում (կոոպերատիվների անդամների թիվը որոշ տեղեր հասնում է 200-ի): Նախևառաջ այն պատճառով, որ շատերի անդամակցությունը կրում է զուտ ֆիկտիվ բնույթ: Անդամների պահանջվող նվազագույն թիվ ապահովելու նպատակով կոոպերատիվի աշխատանքներում ներգրավվում են ոչ շահագրգիռ գյուղացիներ, ովքեր ակտիվ մասնակցություն չեն ունենում կոոպերատիվի գործունեությանը, չեն մասնակցում ժողովներին, որոշումների կայացմանը և այլն: Մյուս կողմից, կոոպերատիվին պատկանող գյուղտեխնիկան չի բավարարում սպասարկելու բոլոր անդամներին, ինչի արդյունքում անդամները դադարում են օգտվել կոոպերատիվի ծառայություններից և իրենց ուժերով են կատարում գյուղաշխատանքները: Բացի այդ, համատեղ որոշումներ կայացնելը և արդյունավետ աշխատելը առավելապես հաջողվում է փոքր խմբերում, որտեղ կա դերերի և պատասխանատվությունների հստակ բաշխում: Այս հարցը քննարկվել է նաև սույն հետազոտության շրջանակում կազմակերպված ֆոկուս խմբերի ընթացքում: Մասնակիցները նույնպես միանշանակ չպատասխանեցին այս հարցին: Մի կողմից շատ անդամներ ունենալը ենթադրում է ավելի շատ անդամավճարներ, մյուս կողմից՝ գյուղտեխնիկան չի բավարարում բոլորին: Այդուհանդերձ, առավել հաջողակ են այն կոոպերատիվները, որոնք ունեն քիչ անդամներ: «Շեն» ԲՀԿ ներկայացուցչի համոզմամբ՝ անհրաժեշտ է կոոպերատիվներում ընդգրկել այնպիսի անդամների, որոնք ունեն ընդհանուր շահեր, համատեղ աշխատելու ցանկություն և փոխադարձ վստահություն, ինչպես նաև ում եկամուտները տվյալ բնագավառից տնտեսության ընդհանուր երկամուտների մեջ էական տեղ են զբաղեցնում կամ կարող են զբաղեցնել: Հողակտորների փոքր և ոչ սահմանակից լինելու պատճառով պասիվ մասնակցություն ունեցող կոոպերատիվի 41 անդամներից 19-ը, և վարչության 5 անդամներից 2-ը այլևս չեն մասնակցում կոոպերատիվի աշխատանքներին, թեև պաշտոնապես համարվում են կոոպերատիվի անդամներ: Կոոպերատիվից դուրս եկած անդամները նշեցին, որ կոոպերատիվին անդամակցությունը ձեռնտու չէր, քանի որ տեխնիկան չէր բավարարում, գյուղատնտեսական աշխատանքները

ուշանում էին և ավելի ձեռնտու է ինքնուրույն մշակելը: Նրանք հայտնեցին, որ նորից կմիանան կոոպերատիվին, եթե այն կարողանա ապահովել տեխնիկայով և ժամանակին հասցնի մատուցել ծառայությունները: «Շեն» ԲՀԿ մարզային պատասխանատուն նշեց, որ տվյալ մարդիկ հեռացվել են կոոպերատիվից ոչ բավարար մասնակցություն ունենալու պատճառով:

«Բերդավան»-ը բախվում է նաև արտաքին մարտահրավերների հետ, մասնավորապես անվտանգության խնդիրների (հաճախ պատահող կրակահերթեր և ռմբակոծություններ Ադրբեջանի կողմից) և կլիմայական անբարենպաստ պայմանների: Այս տարի, օրինակ, կարկուտը ոչնչացրել է դեղձի բերքի մեծ մասը:

Կոոպերատիվի անդամների մեծ մասը կոոպերատիվի թերություն են համարում մեքենա-սարքավորումների սակավ լինելը և դրանց մաշվածության բարձր աստիճանը:

Նշվեց նաև ոռոգման ջրի խնդիրը և անդամների շահագրգռվածության պակասը: Անդամները ցանկություն հայտնեցին, որ կոոպերատիվը լինի բազմապրոֆիլ, ունենա մեքենասարքավորման մեծ բազա, որպեսզի իրականացնի նաև վարուցան, շարքերի հարթեցում:

## **Կառավարում**

Վերջին 12 ամիսների ընթացքում կոոպերատիվը գումարել է վարչության երեք նիստ, որոնցից երկուսի համար կազմվել են արձանագրություններ: Կոոպերատիվի ընդհանուր ժողով ըստ կոոպերատիվի նախագահի հնարավոր չի եղել հավաքել՝ անդամների ցածր հետաքրքրվածության պատճառով: Այդուհանդերձ, վարչության որոշումները փակցվում են հայտարարությունների ցուցանակի վրա և այդպիսով հասանելի դառնում կոոպերատիվի անդամներին և համայնքին:

Կոոպերատիվի անդամների մեծ մասը մշտապես մասնակցում է կոոպերատիվի որոշումների կայացման գործընթացին, մյուս մասը՝ ոչ միշտ, բայց երբեմն մասնակցություն ունենում է: Անդամների մեծ մասը ցանկություն է հայտնել ավելի շատ մասնակցելու որոշումների կայացմանը: Պատասխանողների մեծամասնությունը լիովին վստահում է կայացրած որոշումներին, մի քանիսն են միայն նշել, որ չեն վստահում ծառայությունների սահմանված գներին: Մյուսները կարծում են, որ դրանք լիովին կամ հիմնականում արդարացված են:

Անդամներից մեկը նշել է, որ կցանկանար, որպեսզի իրենք նույնպես մասնակցեն ծառայության գների սահմանման գործընթացին:

«Շեն» ԲՀԿ մարզային ներկայացուցիչը, սակայն, նշեց, որ բոլորը չեն հավաքվում ժողովների ժամանակ, և ակտիվ են այն անդամները, ովքեր շահ և ակնկալիք ունեն կոոպերատիվից: Նրա խոսքով՝ առավել ակտիվ են 10-15 հոգի:

Ինչ վերաբերում է կոոպերատիվի վերագրանցմանը սպառողական կոոպերատիվից գյուղատնտեսական կոոպերատիվի «Շեն» ԲՀԿ ներկայացուցիչը դեռ իրատեսական չի համարում: Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին նոր օրենքի առավելություններին զուգահեռ՝ ավելի խիստ են նաև հարկային պարտավորվածությունները, ինչին կոոպերատիվն առայժմ պատրաստ չէ:

### **Զարգացման հեռանկարներ**

Հաշվի առնելով ներկայիս իրավիճակը, կոոպերատիվի ներկայացուցիչները լուրջ մտահոգություններ են հայտնում հետագա զարգացումների վերաբերյալ: Խաղողի այգիները և խաղող մշակողների թիվը պակասում է՝ ոռոգման խնդիրների և մթերման ցածր գնի պատճառով: Ոռոգման համակարգի նորոգման համար միջոցների հայթայթման ջանքերը դեռևս արդյունք չեն տվել: Մյուս կողմից, կոոպերատիվը 2014 թ.-ին հաջողությամբ բանակցել է «Կարաս» գինու գործարանի հետ, ինչի արդյունքում կոոպերատիվի անդամների արտադրանքը վաճառվել է շուկայականից բարձր գնով:

Քանի որ մեծ քանակի որակյալ դեղձ արտադրել չի հաջողվում, կոոպերատիվը պլաններ ունի դեղձի այգիները փոխարինել արքայանարինջի և ցածրաճ ընկույզի այգիներով:

Այդուհանդերձ, կոոպերատիվի անդամների մեծ մասը նշել է, որ 2016թ.ին պլանավորում են ավելացնել իրենց արտադրանքի քանակը: Նրանք ովքեր նշել են, որ չեն պատրաստվում ավելացնել, որպես խոչընդոտ նշում են գյուղի սահմանամեծ լինելը և ֆինանսական միջոցների պակասը:

Հաշվի առնելով կոոպերատիվի աշխատանքի բոլոր խոչընդոտները՝ ներկայումս կոոպերատիվը չի պլանավորում որևէ նոր գործունեություն ծավալել, շարունակելու են զբաղվել այգիների մշակմամբ:

Այդուհանդերձ, չնայած բոլոր դժվարություններին, կոոպերատիվի ներկայացուցիչները լավատեսորեն են տրամադրված կոոպերատիվի հետագա զարգացման նկատմամբ և մեծ հույսեր են կապում մոտ ապագայում գյուղատնտեսական տեխնիկայի համալրման հետ կապված: Նոր տեխնիկայի ձեռքբերումը կոոպերատիվի համար կբացի մի շարք նոր հնարավորություններ, այդ

թվում՝ կավելանան առաջարկվող ծառայությունները, հնարավոր կլինի ավելի շատ գյուղացիների սպասարկումը, կավելանան նաև կոոպերատիվի անդամները, հնարավոր կլինի սպասարկել նաև անասնապահությամբ զբաղվող գյուղացիներին, ում անհրաժեշտ է տույն կապող տեխնիկա: Քանի որ տեխնիկայի պակասը առաջնային խնդիր են համարում կոոպերատիվի անդամները, ինչպես նաև ընդհանրապես բոլոր գյուղացիները, կոոպերատիվի կողմից այս խնդրի լուծումը միանշանակ կհանգեցնի դրական փոփոխությունների: Հատկանշական է, սակայն, որ կոոպերատիվի անդամները խնդրի լուծումը տեսնում են միայն արտաքին օժանդակությամբ՝ համարելով, որ իրենց ֆինանսական դրությունը թույլ չի տալիս անգամ մտածել սեփական ներդրմամբ տեխնիկա գնելու մասին:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հետազատությունը ցույց տվեց, որ մասնակիցների առավել փոքր խումբն է ստույգ ընկալում կոոպերատիվի գաղափարները, սկզբունքները և արժեքները: Այս խմբի մեջ են մտնում որոշ կոոպերատիվների նախագահները, համեմատաբար փոքր կոոպերատիվների և ոչ ֆորմալ խմբերի անդամները, ում հետ ինտենսիվ ուսուցողական ծրագրեր են իրականացրել միջազգային և տեղական կազմակերպությունները: Այնուամենայնիվ, հարցվածների զգալի մասը կոոպերատիվը ընկալում է կա՛մ իբրև անդամներին օգնություն տրամադրող մարմին, կա՛մ նույնացնում է այն սովետական կոլխոզի/սովխոզի հետ:

- Խորհուրդ է տրվում կոոպերատիվների կամ կոոպերացիայի հետ աշխատանքներ սկսելուց առաջ, իրականացնել նախապատրաստական միջոցառումներ: Այդ միջոցառումների մեջ նախատեսել տեսական և պրակտիկ դասընթացներ կոոպերատիվի անդամների հետ, որոնց ժամանակ հասկանալի և մանրամասն կերպով ներկայացնել կոոպերատիվի գաղափարը, սկզբունքները և արժեքները: Դասընթացների ժամանակ կիրառել ինտերակտիվ տեխնիկաներ, որոնք կօգնեն մարդկանց փոխել իրենց պատկերացումները կոոպերատիվի մասին:

Հարցված համայնքները միմյանցից տարբերվում են երկու հիմնական հատկանիշով՝ համախմբվածության մակարդակով և համագյուղացիների կենսամակարդակի ցայտուն կամ աննկատ տարբերությամբ:

- Կոոպերատիվներ ստեղծելիս կամ կոոպերատիվի մեջ ներդրում անելիս՝ խորհուրդ է տրվում նախապես ուսումնասիրել համայնքները և ընտրել այնպիսի համայնքներ, որտեղ մարդկանց համախմբվածությունը և փոխօգնությունը առավել բարձր է: Հարկ է հասկանալ, թե համայնքում ովքեր են ֆորմալ և ոչ-ֆորմալ առաջնորդները:

Կարևոր է ընտրված համայնքներում գյուղապետի և «հարուստ ֆերմերների» հետ առանձին աշխատանքներ տանել, որպեսզի վերջիններս իրենց ակտիվ ներգրավվածության դեպքում չխոչընդոտեն կոոպերատիվի աշխատանքներին:

Ինքնակազմակերպման խնդիր ունեն ետխորհրդային Հայաստանի համայնքների ճնշող մեծամասնությունը, իսկ ստեղծված և նոր ստեղծվող կոոպերատիվների ճակատագրերը մեծ չափով կախված են նախագահի կերպարից:

- Խորհուրդ է տրվում համայնքներում գտնել այն ֆորմալ կամ ոչ ֆորմալ խմբերը, որոնք ինքնուրույն կամ միջազգային կառույցների օգնությամբ համախմբվել են մեկ միասնական նպատակի շուրջ: Եթե խմբերի կողմից առաջարկված նախաձեռնությունները կարող են հիմք հանդիսանալ անկախ և ինքնավար կոոպերատիվ ստեղծելու համար, խորհուրդ է տրվում ցուցաբերել աջակցություն: Եթե համայնքի զարգացման ծրագրեր իրականացնելիս, կազմակերպությունը հանդիպում է այնպիսի մարդու, որը հետաքրքրված է կոոպերատիվ ստեղծել և կարող է լինել կոոպերատիվի պոտենցիալ նախագահ, խորհուրդ է տրվում նրան ընդգրկել կոոպերատիվներին վերաբերող ծրագրերի մեջ: Ընդհանուր առմամբ, կոոպերատիվների նախագահների հետ հարկ է պարբերաբար իրականացնել դասընթացներ՝ ուղղված «պոզիտիվ մտածողության» և առաջնորդներին հատուկ ունակությունների զարգացմանը:

Հաջողության հասած կոոպերատիվների և ոչ ֆորմալ խմբերի անդամները կրողն են այն արժեքների և սկզբունքների, որը հատուկ է զարգացած երկրների կոոպերատիվներին:

- Խորհուրդ է տրվում կոոպերատիվների հետ աշխատելիս, մանրամասն ներկայացնել Հայաստանում հաջողություն ունեցած կոոպերատիվների և ոչ ֆորմալ խմբերի փորձը. հրավիրել այս կոոպերատիվների և ոչ ֆորմալ խմբի անդամներին, որպեսզի իրենք իրենց պատմություններով ոգևորեն մյուսներին և պատասխանեն նորաստեղծ կամ գործող կոոպերատիվի անդամների հարցերին:

Համայնքներում տարածված է հուսահատության մթնոլորտը, ինչին նաև նպաստել են միջազգային կազմակերպությունների կողմից խթանված և անավարտ թողնված ծրագրերը:

- Խորհուրդ է տրվում համայնքի զարգացմանն ուղղված յուրաքանչյուր ծրագիր սկսելուց առաջ մշակել և այնուհետև իրականացնել համայնքին ու կոոպերատիվին չվնասող «ելքի ռազմավարություններ»: Սա հնարավորություն կտա կայուն զարգացման հիմքեր ստեղծել համայնքներում և կնպաստի համայնքների և կոոպերատիվների անդամներին հաղթահարել հուսահատությունը:

Համայնքներում հուսահատության մթնոլորտը ուղեկցվում է նաև մարդկանց «բացասական մտածողությամբ»: Կանանց փոքր կոոպերատիվում ու ոչ ֆորմալ խմբում այս խոչընդոտը հաղթահարված էր միջազգային կառույցների հետ ինտենսիվ աշխատանքի շնորհիվ:

- Խորհուրդ է տրվում զարգացման ծրագրերի մեջ ներառել միջոցառումներ, որոնք կնպաստեն «բացասական մտածողությունը» դրականով փոխարինելուն: Հարկ է հաշվի առնել, որ այն նախաձեռնությունները, որոնք իրենց առջև դնում են փոքր և հասանելի նպատակներ, համայնքներում տարածում են ոգևորվածություն և նպաստում «դրական մտածողության» ամրապնդմանը: Ուսուցման ծրագրերի մեջ կարևոր է ներառել բաժին, որն ուղղված կլինի ձախողումներից չհիասթափվելու կարողությունների զարգացմանը:

Ուսուցման ծրագրերի մասին երկու ծայրահեղ վերաբերմունք է արտահայտվել: Ըստ հարցվածների մի խմբի՝ դասընթացները անիմաստ են, իսկ ըստ մյուս խմբի՝ աճելու և զարգանալու բացառիկ հնարավորություն են ընձեռում:

- Խորհուրդ է տրվում փոխել մարդկանց բացասական վերաբերմունքը ուսուցման ծրագրերի հանդեպ: Աջակցել այնպիսի ուսուցողական ծրագրերի իրականացմանը, որոնց պահանջարկը եկել է համայնքից, կոոպերատիվից և ոչ ֆորմալ խմբերից: Ընտրել այնպիսի թեմաներ, որը քաջատեղյակ է նյութին և նյութը ներկայացնելու ինտերակտիվ տեխնիկաներ է օգտագործում: Հարկ է նաև խուսափել մարդկանց շահագրգռել սին խոստումներով, որպեսզի վերջիններս մասնակցեն ուսուցման ծրագրերի:

Ֆինանսական միջոցներ հայթհայթելը կոոպերատիվների ամենամեծ խնդիրն է Հայաստանում: Կոոպերատիվներին հուզող խնդիրներից են նաև տեխնիկայի որակը, որը չի համապատասխանում տեղանքին և արագ փչանում է, տեխնիկայի քանակն ու տեսակը, ինչի պատճառով ոչ բոլոր ծառայություններն են մատուցվում համայնքներում և կոոպերատիվը չի հասցնում բոլոր անդամներին ժամանակին ծառայություններ մատուցել:

Կոոպերատիվները համայնքներում փոխում են ֆերմերների կյանքի որակը՝ հնարավորություն են տալիս իրենց անդամներին օգտվել ցածր տոկոսադրույքով վարկերից և շուկայականից ցածր գներով վարձակալել կոոպերատիվի գյուղտեխնիկան, ինչից շահում է կոոպերատիվի յուրաքանչյուր անդամ, իսկ որոշ դեպքերում նաև ողջ համայնքը:

- Խորհուրդ է տրվում համայնքի զարգացմամբ զբաղվող կազմակերպություններին շարունակել ակտիվ աշխատել միջազգային դոնորների հետ և իրենց օգնությամբ աջակցություն ցուցաբերել կոոպերատիվներին՝ ձեռք բերելու բավարար քանակով որակյալ տեխնիկա: Միաժամանակ, ծայրահեղ կարևոր է, որ պետական և մասնավոր դոնորների կողմից տրամադրվող արտաքին աջակցությունը լինի



անհրաժեշտ նվազագույն մակարդակի. Այդպիսով խրախուսել կոոպերատիվների անդամներին կատարել սեփական ներդրումներ կոոպերատիվների ակտիվներում և/կամ ակտիվներ գնել՝ օգտագործելով կոոպերատիվի պահուստային ֆոնդը: Սա կնպաստի կայունությանը, սեփականատիրական գիտակցության զարգացմանը, կոոպերատիվի աշխատանքներում առավել ակտիվ մասնակցությանը և սովետական՝ արտաքին վերահսկողությանը սովոր և ինքնաբավությունը մերժող մտածելակերպից հրաժարվելուն:

Հետազոտությունը ցույց տվեց, որ կոոպերատիվներին պակասում են լավ մտածված և իրատեսական բիզնես ծրագրեր, և կոոպերատիվների անդամներն, իրականում, շատ սահմանափակ մասնակցություն ունեն որոշումների կայացման գործընթացին (նրանցից շատերը հետաքրքրված չեն գործընթացում ներգրավվելով):

- Դոնորները պետք է բարձր մակարդակի բիզնես ծրագրերի մշակման մասնագիտական աջակցություն տրամադրեն կոոպերատիվներին և մեխանիզմներ ստեղծեն ծրագրի իրականացման վերահսկման համար: Չափազանց կարևոր է, որ բիզնես ծրագրերի մշակման գործընթացում դոնորները ապահովեն կոոպերատիվների անդամների մասնակցության բարձր մակարդակ: Ջանքեր պետք է գործադրել նաև համոզվելու, որ կոոպերատիվները պարբերական ժողովներ են գումարում, որտեղ անդամները տեղեկացվում են բոլոր զարգացումներին, բարձրաձայնում են իրենց կարծիքը և ազդեցություն են ունենում վարչության կողմից կայացվող որոշումների վրա: Հաշվի առնելով կոոպերատիվի անդամների հետաքրքրվածության ներկայիս ցածր մակարդակը՝ այս փուլում կոոպերատիվների կողմից պատժիչ միջոցների կիրառումը խրախուսելի կլինի՝ անդամների մասնակցության ապահովման նպատակով (ինչպես օրինակ՝ անդամակցությունից զրկելը կոնկրետ թվով ժողովներին չմասնակցելու դեպքում): Շատ կարևոր է նաև համապատասխան միջոցներ կիրառել՝ կառավարման մարմինների ընտրությունների գործընթացը հնարավորինս արդար և թափանցիկ դարձնելու նպատակով: